№ 131 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 18 ՅՈՒՆԻՍԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 18 ՅՈՒՆԻՍԻ № 131

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Խնդրվում է այն բաժանորդներին, որոնք վճարել են տարեկան բաժանորդավճարի կէս մասը, ուղարկել նաև երկրորդ մասնավճար **5** րուբլին, որպէսզի թերթի առաքման գործում յուլիսի 1-ից ընդհատում տեղի չունենայ:

Տարեկան բաժանորդավճարը լրացնողները կը ստանան նաև խոստացված ՊՐԷՄԻԱՆ:

Նիզամվեդա Վարդանովնա Քալանթարեան և իր զաւակները յայտնում են, որ մայիսի 29-ին Կարլսբադում վախճանված ամուսնու և հօր՝

ՔԱԼԱՆԹԱՐ ԻՎԱՆՈՎԻՉ
ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆԻ

մարմինը Թիֆլիս է ժամանել երէկ, երեքշաբթի, յունիսի 17-ին: Միսական արարողութիւնը տեղի կունենայ այսօր, չորեքշաբթի, յունիսի 18-ին Քամոյեան եկեղեցում (Դվորցովայա փող.), առաւ. ժամը 11-ին: Թաղումը այսօր, Խօջիվանքի գերեզմանատանը: 608. 2—2

Մինա Ագաֆոնովնա և Քրիստափոր Վարդանովիչ Նազարբէկեանները յայտնում են ազգականներին և ծանօթներին, որ մայիսի 29-ին Կարլսբադում վախճանված իրանց անմոռանալի և թանգագին փեսայի՝ երդուեալ-հաւատարմատար

ՔԱԼԱՆԹԱՐ ԻՎԱՆՈՎԻՉ
ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆԻ

մարմինը Թիֆլիս է ժամանել երէկ, երեքշաբթի, յունիսի 17-ին: Միսական արարողութիւնը տեղի կունենայ այսօր, չորեքշաբթի, յունիսի 18-ին Քամոյեան եկեղեցում (Դվորցովայա փող), առաւ. ժամը 11-ին: Թաղումը այսօր, Խօջիվանքի գերեզմանատանը: 609. 2—2

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՄՈՒԹԱՖԵԱՆԸ իր զաւակներով սրտի խորին կսկիծով յայտնում են՝ առաջինը իր անմոռանալի ամուսնու և վերջինները իրանց սիրելի մօր՝

ԼԻՒՑԻԱ ԿԱՐԼՕՎՆԱ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ յունիսի 16-ին: Ամբիծքը տեղի կունենայ այսօր, չորեքշաբթի, յունիսի 18-ին, երեկոյեան ժամը 7½-ին, հանգուցեալի բնակարանում (Паскевича ул. № 12): Յուղարկաւորութիւնը վաղը, հինգշաբթի, յունիսի 19-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից դէպի Կաթոլիկաց եկեղեցին (Կաթոլիկական փողոց): Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: Խնդրվում է պսակներ և ծաղիկներ չը դնել դագաղի վրա: 613. 2—1

Շողակաթ Մութաֆեանը իր դուստրներով յայտնում է իրանց սիրելի հարսի՝

Լիւցիա Կարլօվնա ՄՈՒԹԱՖԵԱՆԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ յունիսի 16-ին: Ամբիծքը տեղի կունենայ այսօր, չորեքշաբթի, յունիսի 18-ին, երեկոյեան ժամը 7½-ին, հանգուցեալի բնակարանում (Паскевича ул. № 12): Յուղարկաւորութիւնը վաղը, հինգշաբթի, յունիսի 19-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից դէպի Կաթոլիկաց եկեղեցին (Կաթոլիկական փողոց): Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 614. 2—1

Սօֆիա Կարապետեան Ղազազեանը իր զաւակներով յայտնում է իր սիրելի եղբօր-կնոջ՝

Լիւցիա Կարլօվնա ՄՈՒԹԱՖԵԱՆԻ

ցաւալի մահը, որ տեղի ունեցաւ յունիսի 16-ին: Ամբիծքը կը լինի այսօր, չորեքշաբթի, երեկոյեան ժամը 7½-ին հանգուցեալի բնակարանում (Паскевича ул. № 12), իսկ յուղարկաւորութիւնը վաղը հինգշաբթի, յունիսի 19-ին, առաւօտեան ժամը 10-ին իր բնակարանից դէպի Կաթոլիկաց եկեղեցին (Կաթոլիկական փողոց): Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 615. 1—1

ՑԻՐԿ
Փ. ԻՒՊԱՏՕՎԻ

Ամբողջ ցիրկի տանիքը ծածկված է ամերիկական նոր բրէզենտով: Այսօր, չորեքշաբթի, յունիսի 18-ին, տեղի կունենայ չտեսած ներկայացում փոփոխված ծրագրով՝ մասնակցութեամբ ամբողջ խմբի և նորեկ արտիստների: Խոշոր երեկոյթ! Հասարակութեան ցանկութեամբ՝ այսօր կրկին անգամ կը տրվի «Խալիֆի երազը» բալէտը՝ մասնակցութեամբ օր. Ն. Իւպատովայի: Այսօր կը մասնակցեն նոյնպէս հասարակ. սիրելիներ՝ երաժիշտ-էկցենտրիկներ Բոզէստինները, անփոխարինելի ակրոբատներ Բոսսինները, միակ Ռուսաստանում կին-ժոկէյ օր. Մատիլդա Վասիլեամս, նորագոյն պարեր կատարող քոյրեր Սօբոլևսկիները, ուրախ տրամադրութիւն ստեղծող բուֆ-չէկ Ջիտաօն և այլք:
ԱԶԴ.—Բոզէստինների բենեֆիսը: 610. 1—1

ԴՕԿՏՕՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ

Ասիստենտ Բեռլինի համալսարանի Charité հիւանդանոցի

Շարունակում է ընդունել Գերմանիա գնացող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրոֆեսորների հետ:
Նոր հասցէն՝ Берлинъ, Фридрихштрассе 133 а. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.

(օ. մ.) տու. 391. 100—21

КИНОПЛАСТИКОНЪ

или

ТЕАТРЪ ИСКУССТВЕННЫХЪ ЛЮДЕЙ
Михайловскій пр., № 163
Программа на 18, 19, 20 и 21 іюня

КИНОПЛАСТИКОНЪ.
Безъ экрана:
ТИТАНІЯ
Арія изъ оперы «Миньонъ»
Англійское тріо.
„Прекрасная Елена"
Арія изъ оперы.
„Принцеса долларовъ"
Арія изъ оперы.
ЧАРДАШЪ.

КИНЕМОТОГРАФЪ:
Сенсація!!!
Шедевръ Кинемотографа
БУРЯ ДУШЕВНАЯ
ЖУТКАЯ драма въ 4-хъ част. съ участіемъ несравненной
Маріи Карми.
ЮНОСТЬ ПОБѢДИЛА
Веселая комедія въ краскахъ.

Всѣ картины демонстрируются подъ музыку концертно-вѣнскаго струннаго оркестра.
Начало въ воскресные и праздничные дни въ 6 ч., а въ будніе въ 7 ч. веч.
616. 1—1
ДИРЕКЦІЯ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—օ—

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԳԱՀԱԺԱՌԱՆԳԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
16 յունիսի

ՍԱՐԱԵՎՕ.—Առաջին մահափորձից յետոյ, գահաժառանգին և կնոջը բուռն ովսաննա արին: Արքիդուքսը և դքսուհին քաղաքային տանը ընդունելութեան ժամանակ փոքրինչ յուզված էին, բայց կենսունակ տրամադրութեան մէջ էին: Երկրորդ մահափորձը տեղի ունեցաւ քաղաքային տնից Թանգարան վերադառնալիս: Արքիդքսի աւտոմօբիլի մէջ գտնվող փոխարքան մնաց անվնաս: Մահափորձից անմիջապէս յետոյ կանչվեցին երկու բժիշկ, որոնց օգնութիւնը անօգուտ եղաւ: Քահանան կարդաց վերջին աղօթքը: Ժամանակաւորապէս մարմինները դրվել են դիակառքի վրա: Քաղաքում ամենուրեք սգադրօշակներ են, մահափորձավայրում մեծ թւով ամբոխներ են: Ոճրագործի նետած ռումբը լի էր մեխերով ու արճճէ կտորներով: Պայթումից ջարդվեցին խանութների երկաթէ փեղկերը: Թեթև վիրաւորվել են մօտ 20 մարդ, մի քանի կին և երեխայ:

Քննութիւնը պարզեց, որ դքսուհին վիրաւորվելուց իսկոյն ուշաթափվեց: Արքիդուքսը մեռաւ վայրկենապէս զարկերակը կտրվելուց յետոյ: Ոճիրը կատարվեց կայծակի արագութեամբ. մօտիկ կանգնածները չը լսեցին կրակոցը:

ՎԻԵՆՆԱ.—Ամբողջ մամուլը միաբերան և ամենախիստ կերպով դատապարտում է Սարաեվօյում կատարված ոճիրը: Լրագիրներն առանձնապէս ընդգծում են արքիդքսի մատուցած ծառայութիւնները զօրքը և նաւատորմը վերակազմելու գործում: Լրագիրներից մի քանիսը ենթադրում են, որ ոճիրը նախապէս մտածված ծրագրի արգասիք է քաղաքական շարժառիթների հողի վրա:

Ժամանեց Ֆրանց-Յովսէփ կայսրը, որ իրան շատ լաւ է զգում: Պէնցինգ կայարանում կայսրին դիմաւորեց արքիդուքս Կարլ Ֆրանց-Յովսէփը. կայսրը կառքով, ողջունվելով մեծ թւով ժողովրդից, մեկնեց Շէնբրունի պալատը:

Կայսրութեան բոլոր ծայրերից ստացվում են ցաւակցական հեռագիրներ: Ամենուրեք հանդէսները յետաձգված են: Տեղի են ունենում հաւատարիմ հպատակութեան ցոյցեր:

«Կոր. Բիւրօն» յայտնում է, որ աշխարհի բոլոր ծայրերից և միապետութեան բոլոր մասերից ստացվում են ցաւակցական հեռագիրներ սարսափելի մահափորձի առիթով: Լրագիրները լի են նեկրոլոգներով: Ստացվում են ցաւակցական հեռագիրներ տէրութիւնների և կառավարութիւնների ներկայացուցիչներից:

ԱԹԷՆՔ.—Աթէնքի բոլոր շրջաններում բուռն համակրանք է յայտնվում Ֆրանց-Յովսէփ կայսրին և Աւստրո-Ունգարիային: Թագաւորն անմիջապէս յանձնարարեց յոյն դեսպանին՝ արտայայտել աւստրո-ունգարական կառավարութեանը խորին համակրանք ու վիշտ Յունաստանի կողմից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Աւստրիական գահաժառանգի և նրա կնոջ մահվան առիթով դեսպանատուն գնացին՝ ցաւակցութիւն յայտնելու համար՝ մինիստրների խորհրդի նախագահը, Պետ. Խորհրդի փոխ-նախագահը, Պալատի, արտաքին գործերի և զինւորական մինիստրները, դեսպանները, ներքին գործերի մինիստրութեան պաշտօնեայ Արբուզովը և արտաքին գործերի մինիստրութեան աւագ խորհրդատու Արգիրոպուլօն:

Թագաւոր Կայսրը բարեհաճեց ցաւակցական հեռագիր ուղարկել Ֆրանց-Յովսէփ կայսրին արքիդքսի և կնոջ մահվան առիթով:

Արտաքին գործերի մինիստրը Վիեննայի ռուսաց դեսպանին հեռագիր ուղարկեց, յայտնելով ցաւակցութիւն ռուսական կայսերական կառավարութեան անունից:

ՎԻԵՆՆԱ. — Կայսրի գալուստից յետոյ, Շէնբրունի պալատում ժողովվեցին պետութեան պաշտօնական անձինք և մեծ պետութիւնների ներկայացուցիչները և արտայայտեցին խորին ցաւակցութիւն:

ՍԱՐԱԵՎՕ. — Կէսօրից յետոյ կայացաւ սէյմի արտակարգ նիստը: Նախագահը զայրոյթ յայտնեց զազիր ոճիրի առիթով և վշտակցեց արքիդքսի և արքիդքսուհու մահը: Նախագահը արժանի խօսքն ասաւ հանգուցեալների յիշատակին:

Արքիդքսի և նրա կնոջ մարմինները զմռսեցին: Դագաղներին դրված են անթիւ պսակներ: Քաղաքը և շրջակայքը յայտարարված են զինւորական դրութեան մէջ:

ՍՕՖԻԱ.—Մինիստրների խորհրդի նախագահ Ռադոսլավովը ցաւակցութեան հեռագիր ուղարկեց Բէրխտոլդին բուլգար կառավարութեան կողմից:

ԼՕՆԴՕՆ.—Պալատում սահմանվեց սուգ մի շաբաթով: Վաղը նշանակված պարահանդէսը յետաձգվեց:

ԱՀՐԱՄ.—Ուսանողները սգերթով անցան փողոցներով ի յիշատակ արքիդքսի և արքիդքսուհու:

ՍԱՐԱԵՎՕ.—Ընդարձակ չափերով վերսկսվեցին հակասերբիական ցոյցերը. Կրօատի երիտասարդութիւնը մեծ ամբոխի ուղեկցութեամբ անցաւ փողոցներով, տանելով առաջից Ֆրանց-Յովսէփ կայսրի պատկերը: Ցուցարարները երգում էին օրհներգը և բացագանչում էին ի պատիւ միապետութեան և դինաստիայի ու սպառնական բացագանչութիւն էին ուղղում Սերբիայի հասցէին: Ամբոխը ջարդեց «Եւրոպա» հիւրանոցի տըների պատուհանները, սերբիական կուլտուրական միութեան, սերբիական դպրոցների և առևտրական հաստատութիւնների պատուհանները: Ոստիկանութիւնը և զինւորականները վերականգնեցին կարգ ու կանոնը:

ԱՀՐԱՄ.—Ուսանողները թշնամական ցոյց կազմեցին Սերբիայի հասցէին ամբոխի հետ միասին, ջարդեցին սերբիական հաստատութիւնների պատուհանները: Ցուցարարներին ոստիկանութիւնը ցրեց: Հակասերբական ցոյցեր տեղի ունեցան նաև սերբիական բանկի շինութեան առաջ:

ԲԵՐԼԻՆ.—Լրագիրները հանգուցեալ արքիդուքսին բնորոշում են, որպէս վերին աստիճանի քաղաքական ցայտուն անձնաւորութեան: «Բերլիներ-Տագէբլատ»-ն ասում է. «Արքիդուքսեան զոյգը զոհ եղաւ կրքոտ թշնամանքի, որ զարթել էր սերբերի մէջ աւստրո-ունգարական վերջին տարիների քաղաքականութեամբ: «Ֆոսիշէ-Ցայտունգը» յիշելով Ալէքսանդր թագաւորի և Դրագա թագուհու մահը, ասում է. «Այդ յանցագործութեան մեղաւորները մնացին անպատիժ: Գուցէ այդ օրինակը մութ ուղեղներում ծնեցրել է խենթ երևակայութիւններ, թէ իբր սպանութիւնը թոյլատրելի միջոց է համարվում նպատակին հասնելու համար. սակայն պէտք է կարծել, որ սերբիական գործը չի շահի այս վերջին գործողութեամբ, որովհետև հասարակական մօրալը դեռ կենդանի է, ինչպէս ժողովուրդների, նոյնպէս և կառավարութիւնների մէջ»: «Նորդ-Դէյտշէ-Տագէս-Ցայտունգ» գտնում է, որ Աւստրո-Ունգարիայի կորուստը առանձնապէս ծանր է այն պատճառով, որովհետև յանձին արքիդուքսի ամենքը սովոր էին տեսնել մի մարդու, որ կարողանում էր պահպանել ինքնակալ Աւստրո-Ունգարիայի դերը ինչպէս ներքին, նոյնպէս և արտաքին քաղաքականութեան մէջ:

ԼՕՆԴՕՆ.—Լրագիրները ցաւակցական յօդուածներ են տպում ծերունի կայսրին հասած դժբաղդութեան առիթով և թւում են բազմի այն ծանր հարուածները, որ հասել են նրան իր երկարամեայ թագաւորութեան ընթացքում: Ամենքը դատապարտում են այդ արիւնալի ոճրագործութիւնը և վերագրում են սերբ շովինիստների ունեցած անբաւականութեան ընդդէմ արքիդուքսի, որ մեծ դեր էր խաղում Բոսնիա և Հերցեգովինայի գրաւման ժամանակ: Բոլոր լրագիրները գտնում են, որ արքիդուքսի մահը մեծ հարուած է Աւստրո-Ունգարիայի համար:

ԿՐԱԿՕՎ.—Լեհական մամուլը իր արտակարգ հրատարակութիւններում ջերմ ցաւակցութիւն է յայտնում միապետին, որ միշտ պաշտպանել է լեհական ժողովրդի ազատ սահմանադրական զարգացումը: Արքիդուքսի սպանութիւնը, լեհական մամուլի կարծիքով, հետևանք է սերբիական դաւերի:

ԲԵԼԳՐԱԴ.—«Պրէս-Բիւրօն» հաղորդում է, որ Սարաեվօյում տեղի ունեցած դէպքը քաղաքը ընկղմեց խոր վշտի մէջ: Գահաժառանգը և կառավարութիւնը ցաւակցական հեռագիրներ ուղարկեցին:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
16 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Անգլիական գաղութը ի պատիւ անգլիական նաւատորմի նաւաստիների կազմեց մարմնամարզական տօնակատարում, իսկ երեկոյեան ճաշ ժողովրդական տանը: Ներկայ էին 500 նաւաստի:

Ծովակալ Բիտտին անգլիական ռազմանաւերի օֆիցէրների հետ եկաւ ծովային մինիստրի զբօսանաւով և երեկոյեան մեկնում է Մոսկվա:

Պալատը դատապարտեց «Сѣв. Мысль»-ի խմբագիր Պետրովին՝ 129-րդ յօդուածի մեղադրանքով երեք տարի բանտի:

ՔԻՇԻՆԵՎ. — Բեսսարաբիայի զանազան տեղերից հաղորդում են կարկտախառն հեղեղի մասին: Շատ հացահատիկ ու այգիներ ոչնչացել են. Ջուրը քշել է կամուրջներ, պոկել է տանիքներ: Խեղդվել են 9 մարդ, շատ խոշոր ու մանր անասուն:

ԿԻԵՎ.—Կարկտախառն հեղեղը մեծ աւերածութիւններ գործեց:

ԿԱՂԶՎԱՆ.—Ջէմալ - Եդդինի քիւրդերի միջև, արօտատեղիներից օգտվելու պատճառով, ընդհարում առաջացաւ, որի ժամանակ երեք հոգի սպանվեցին, երեք հոգի էլ վիրաւորվեցին:

ԴՈՒՐԱՑՑՕ.—Յունիսի 15-ին հազիւ խափանվեց մինիստրական ճգնաժամի հնարաւորութիւնը: Պարզվեց, որ հոլլանդացի մայոր Շլէյսը բացել էր այն նամակը, որ ապստամբները ուղարկել էին կառավարութեանը, և սեփական նախաձեռնութեամբ կրակ էր ուղղել ապստամբների դէմ: Կառավարութիւնը պահանջեց պաշտօնանկ անել Շլէյսին, բայց նացիոնալիստները յայտնեցին Թուրխան-փաշային, թէ կը պաշտպանեն Շլէյսին զէնքը ձեռքին: Նոր միջադէպի առաջն առնելու համար Շլէյսին առաջարկված է մեկնել Վալօնա:

ՎԻԵՆՆԱ.—«Կոր. Բիւրօյին» հաղորդում են Դուրացցօյից յունիսի 15-ից. «Թուրխան-փաշան մեկնեց Վիէննա և Հռոմ, ինչպէս ենթադրում են, որպէսզի ստանայ ակտիվ օգնութիւն եւրոպական կաբինէտների կողմից ընդդէմ ապստամբների»:

Կ. ՊՕԼԻՍ.—«Թանինը» հաղորդում է, որ Թիւրքիան ընդունել է Յունաստանի առաջարկը՝ խառն յանձնաժողով կազմելու մասին, որ պէտք է զբաղվի գաղթող յոյների և թիւրքերի փոխանակութեան և նրանց թողած անշարժ կայքերը գնահատելու հարցով:

ՈՒՐՄԻԱ.—Բանի շրջանում առաջվայ նըման անիշխանութիւն է: Ազգաբնակութիւնը բաժանվել է երկու կուսակցութեան՝ Մահմադ-խանի և Ռուստէմ-խանի:

ՏՈՒԼՕՆ.—Փոխ-ծովակալ Րուսինը և ռուսաց օֆիցէրները մեկնեցին Տուլօնից։

ՎԻԷՆՆԱ.—Կայսրը ունկնդրութեան ընդունեց ֆինանսների մինիստր Բիլինսկիին։ Ունկնդրութիւնը տևեց մօտ մի ժամ։

ԲԵՐԼԻՆ.—Մինիստրութեան նօտան՝ ռուսահպատակներից զինուորական տուրք վերցնելու մասին՝ դեսպան Սվէրբէևը յանձնեց արտաքին գործերի մինիստրութեան։

ԿՐԱԿՕՎ.—Բիլսէից տեղեկացնում են, որ չը նայած լեհական սօկօլների յօբելեանի կատարման արգելքին, գերմանացիների և լեհերի միջև տեղի ունեցան ընդհարումներ։ Լուրերի համաձայն, մօտ 40 մարդ վիրաւորված են։

ԼԷՅՊՑԻԳ.—Տպագրական գործի ցուցահանդէսում բացվեց Գուտտենբերգի արձանը ռուսաց կօմիսարի նախաձեռնութեամբ։ Օտարազգի տէրութիւնների ներկայացուցիչները պսակներ դրին։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Պարիզից մեր ստացած մասնաւոր տեղեկութիւնները հաղորդում են, որ Պօղոս փաշա Նուպարը, Եգիպտոսից գալով այդտեղ, նպատակ ունէր տեսակցել հայկական րէֆօրմների երկու ընդհանուր վերատեսուչների՝ Հօֆի և Վեստենէկի հետ և վերջնականապէս պայմանաւորվել մի քանի կարևոր խնդիրների մասին։ Վերատեսուչներից մէկը, ինչպէս այժմ որոշվել է, իր բնակութեան վայր ունենալու է Բիթլիսը, իսկ երկրորդը՝ Դիարբէքիրը։ Այնուհետև Նուպար փաշան հարկ է տեսել գնալու Պետերբուրգ և այցելելու ռուսաց արտաքին գործերի մինիստր Սազօնօվին։

Պետերբուրգից ստացված լուրերն արդէն յայտնեցին, որ Պօղոս փաշա Նուպար, գալով Պետերբուրգ, այցելեց Սազօնօվին և, երկու օր մնալով այդտեղ, վերադարձաւ Պարիզ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՄՕՏ

Երէկ, յունիսի 17-ին, առաւօտեան ժամը 11½-ին, Հայկական Ընդհանուր Բարեգործական Միութեան և Պօղոս Նուպար փաշայի ներկայացուցիչ դօկտոր Ն. Տաղաւարեան պատիւ ունեցաւ ներկայանալու Կովկասի փոխարքայ կոմս Վօրոնցով Դաշկովին առանձին ունկնդրութեամբ։

Դօկտոր Ն. Տաղաւարեան նախ շնորհակալութիւն յայտնեց կոմսին իրան շնորհած ունկնդրութեան համար. երկրորդ երախտագիտական զգացումներ արտայայտեց այն բարեացակամ և համակրական վերաբերմունքի համար, որով կոմսը միշտ վերաբերվել է հայ ժողովրդին, ապա բացատրեց իր միսսիայի նպատակը։ Ամփոփ և հակիրճ տեղեկութիւններ տալով Հայկ. Բ. Ընդհ. Միութեան նպատակի, գործունէութեան և ուղղութեան մասին, որ զուտ ֆիլանտրօպիական է, հեռու քաղաքական որևէ նկատումներից, նա խնդրեց թոյլատրել բանալ և Կովկասում այդ միութեան մի քանի ճիւղեր կամ վարչութիւններ, ինչպէս բացվել են աշխարհիս բոլոր հայաբնակ վայրերում՝ Թիւրքիա, Եւրօպա, Ամերիկա, Աֆրիկա և այլն։ Այդ մասին, յայտնեց դօկտոր Ն. Տաղաւարեան, դարձեալ Պօղոս Նուպար փաշայի յանձնարարութեամբ, մի քանի ժամանակ առաջ դիմումն է արել և «Մշակի» խմբագիր Հ. Առաքելեան։ Մօտ 20 րոպէ տևեց ունկնդրութիւնը։ Փոխարքան պատասխանեց, որ առանձին ուշադրութիւն կը դարձնի այդ միջնորդութեան վրա և, գործի հետ մանրամասն ծանօթանալուց յետոյ, պարտապատշաճ անօրէնութիւնը կանի։

ՀԻՆ ՈՅԺԵՐԸ «ՆՈՐ-ՈՅԺԻ» ԷՋԵՐՈՒՄ

II

Մենք այժմ անցնենք № 1-ում պ. Շ.-ի յօդուածին, որը իր հերթին ևս բանւորական ազատագրման գաղափարով տոգորված է երևում, բայց ի հարկէ արտաքին ձևով։ «Հայ բանւորութիւնը» վերնագիրն է կրում այդ յօդուածը։ Յօդուածագիրը ցանկանում է ապացուցանել, որ հայ բանւորութիւնը բազմաթիւ է, քան վրացականն ու թիւրքականը. Թէ ինչ նպատակով է նա ցանկանում ապացուցել այդ, դա մնում է միայն հեղինակին յայտնի և ընթերցողի համար այդ չէ պարզվում։

«Բագուի նաւթաշխարհում,—գրում է նա,—հայ բանւորութիւնը հասնում է 9 հազարի»։ Տեսնենք որքան ճիշդ է այդ։ 1907 թ. նաւթարդիւնաբերողների խորհրդի ստատիստիկական բիւրօյի հաշւետւութեան մէջ մենք տեսնում ենք, որ նաւթաշխարհում եղել է 48,826 բանւոր և ըստ տոկոսի հայերը եղել են 24,4%-ը, որը հաւասար է 11,912 բանւ. *)։ Պէտք է ի նկատի ունենալ և այն հանգամանքը, որ մի շարք մանր արհեստանոցներ և նաւթարդիւնաբերական ֆիրմաների ծառայողներ, որոշ պատճառների շնորհիւ, չեն մտել ստատիստիկ. բիւրօյի հաշւի մէջ. ուրեմն, եթէ ի նկատի ունենանք և այդ հանգամանքը, այն ժամանակ պէտք է ասել, որ շատ է եղել հայ բանւորութեան քանակը, քան թէ 11,912 բանւ., ինչպէս ցոյց է տրված յիշեալ տեղը։ Իսկ ներկայումս՝ ասել 9000 է, դա նշանակում է ոչ մի հասկացողութիւն չունենալ Բագուի նաւթաշխարհում գտնվող հայ բանւորի քանակի մասին, և ես աւելորդ եմ համարում այդ մասին թւեր բերել, այլ կասեմ, որ շատ-շատ գուցէ երկու անգամ աւել, քան թէ պ. Շ.-ն է գրում։

№ 3-ում նոյն պարոնը շատ է ցանկանում պարզել այն գաղտնիքը, թէ ինչ ֆակտորների շնորհիւ է, որ առաջ է գալիս պրօլետարիզացիան հայ իրականութեան մէջ, և կարծէք թէ գտել է։ Գիւղացին, ըստ յօդուածագրի, օտարութեան է դիմում, որովհետև «դրա պատճառը ընդհանուր առմամբ,—գրում է նա,—գիւղացի դասակարգի տնտեսական անապահովութիւնն է»։ Իսկ ինչու է գիւղացու դրութիւնը այդպէս. դուրս է գալիս, ըստ յօդուածագրի, որովհետև հայ գիւղացիութիւնը գլխաւորապէս լեռներում է ապրում, հացահատիկները բաւարար չեն լինում և ուստի նա ստիպված է լինում դէպի քաղաքները դիմել հաց վաստակելու նպատակով։ Ոչ. լեռները չեն մեղաւորը, այլ այն համաճարակն է, որ ընդհանուր առմամբ կոչվում է կապիտալիզմ, և նա մուտք է գործել գաւառներն ու իր պատմական դերն է կատարում ամենուրեք։ Եթէ հայերի մէջ բանւոր դասակարգը ստուարաթիւ է, պէտք է ի նկատի ունենալ և այն հանգամանքը, որ հայ առևտրական դասն էլ շատ է, քան թէ թիւրք-թաթարականը և վրացականը և շնորհիւ այդ առևտրական դասի է, որ գիւղացիք դէպի քաղաք են դիմում.

Աւելի քան այլաբանական բնոյթ է կրում պ. Ս. Ան.-ի «Աշխատաւորական մամուլը» յօդուածը։ Ըստ յօդուածագրի դուրս է գալիս, որ «Сѣв. Раб. Газ.», «Путь Правды» և «Стойкая Мысль» բանւորական թերթեր են։ Իսկ քիչ յետոյ այդ բոլոր «վերոյիշեալ թերթերը հանդիսացել են միակ համարձակ արտայայտիչները աշխատաւորութեան պահանջների և իղձերի» (տես № 1)։ Այստեղ հարկաւոր է մեզ պարզել, որ յօդուածագիրը կամ թիւրիմացութեան մէջ է, կամ թէ դիտաւորեալ կերպով ցանկացել է խեղաթիւրել փաստն ու աղաւաղել ճշմարտութիւնը կիսագիտակից հայ պրօլետարիատի առաջ։ Իսկ մենք կարևոր ենք համարում այստեղ յիշել, որ «Путь Правды» և «Сѣв. Раб. Газет.» բանւորական թերթեր են, իսկ «Стойкая Мысль» թերթը նարօդնիկների օրգանն է, այսինքն՝ մանր բուրժուական խաւերի, և ոչ մի առնչութիւն չունի նա բանւորութեան հետ այն իմաստով, ինչ իմաստով հասկացվում է բանւորական օրգանը մեր օրերում՝ մարքսիստական աշխարհահայեացքից ելնելով։

Ս. Ան.-ն իրար ետևից կրկնում է «ուղղութիւն», «դասակարգ» և այլն. բայց թէ ինչ ուղղութիւնների մասին է խօսքը և որն է այն «աղանդաւորութիւնը», որից պէտք է խուսափել, այդ մասին ոչ մի խօսք չէ ասում յօդուածագիրը, ուստի և մեզ մնում ընթադրել, որ նա իրան համար դեռ չէ պարզել այդ դարձուածքները, կամ դիտաւորեալ կերպով գործ է ածում այնտեղ, որտեղ հարկաւոր է քօղարկել ճշմարտութիւնը «դասակարգ», «բանւոր» հայլն դարձուածքները գործածելով։ Եթէ այդպէս չը լինէր, նա չէր գրի. «հայ իրականութեան մէջ չը կայ մամուլ, որ կանգնած լինի դասակարգային տեսակէտի վրա և ընթանայ այդ ուղղութեամբ, առանց ի նկատի առնելու ուղղութիւնների տարբերութիւնը այդ շրջաններում» (Տես № 2)։ Եթէ պարզ լինէին այդ պարոնի համար այն դարձուածքները, որ մենք մատնանշեցինք, նա կը հասկանար, որ երբէք չէ կարելի միացնել այն ուղղութիւնները, որոնք կոչվում են աշխատաւորական և նարօդնիկական՝ ռուսական կեանքում, իսկ հայ իրականութեան մէջ դաշնակցական և հնչակեան ուղղութիւնները մարքսիստների հետ, որովհետև վերջիններս իրանց սկզբունքային դաւանանքով ու տակտիկայով շատ հեռու են առաջիններից, որպէս զուտ բանւորական ներկայացուցիչներ, իսկ առաջինները որպէս մի կօնգլօմերատ զանգուած՝ իրանցից ներկայացնում են իբրև մանր բուրժուական խաւերի ներկայացուցիչ և նրանց իղձերի արտայայտիչը. իսկ այդ մանր բուրժուական զանգուածները անգամ մօտաւոր առնչութիւն չունեն բանւոր դասակարգի պատմական առաքելութեան հետ։ Ուրեմն հասկանալի պէտք է լինի այն, որ կան «ուղղութիւններ» և այդ ուղղութիւնների մէջ կայ մեծ «տարբերութիւն» և այդ տարբերութիւնը բանւոր դասակարգը և նրա իդէօլօգիան ի նկատի են ունեցել անցեալում և պէտք է ի նկատի ունենան ապագայում ու հարկաւոր դէպքում յիշեցնեն բանւորութեանը, որ նրանք գիտակցեն իրանց շահերը և հեռու մնան այն մանր բուրժուական դասակարգից, որպիսին է ներկայումս հայ իրականութեան մէջ «Նոր Ոյժը», բայց փաստապէս հին ոյժերը, իր քօղարկված քարոզներով, որպէս մանր բուրժուական խաւերի բերանը ու նրա իղձերի արտայայտիչը։

Նոյն յօդուածում կարդում ենք. «Մի քանի փորձ արին վերջին տարիներս «Եռանդ», «Նոր Խօսք», որոնց գոյութիւնը շատ կարճ եղաւ»։ Իբր թէ ուղղութիւնների մէջ տարբերութիւն չեն դրել և թէ դրանք եղել են բանւորական թերթեր։ Նախ պէտք ասել, որ «Եռանդը» բանւորական թերթ չէ եղել, երկրորդը՝ բացի «Նոր Խօսքից» եղել են «Նոր Կեանք» և «Մեր Խօսքը» բանւորական թերթերը և թէ անցեալում եղել են մի շարք թերթեր՝ «Կեանք», «Ձայն», «Կայծ», «Նոր Օրեր», «Ուղի», «Գործ», «Կոչ» և այլն, և այդ բոլոր թերթերը ունեցել են իրանց որոշ ուղղութիւնն ու ուղղութիւնների մէջ տարբերութիւն դրել են և չեն ընթացել երբէք այն ուղղութեամբ, ինչ ուղղութեամբ պարոն յօդուածագիրը կարծում է և յայտարարում, որը շատ թէ քիչ գիտակից մարդու համար անթոյլատրելի պէտք է համարվի։

Նոյն յօդուածում կարդում ենք, որ «ամենից առաջ հայկական (մենք կասենք՝ թիւրքահայ. Ս. Բ.) հարցը, աւելի շատ նպաստել է դասակարգերի համախմբմանը»։ Այստեղ ևս քօղարկված է դիտաւորեալ կերպով և պարզ չէ ասված թէ ինչ դասակարգերի մասին է խօսքը. դասակարգերի մասին խօսք լինել չէ կարող այն հասարակ պատճառով, որ թիւրքահայ հարցը նպաստել է մանր բուրժուական նացիօնալիստ կուսակցութեան համախմբմանը. դա բացասել չէ կարելի. իսկ որ այդ կուսակցութիւնը մինչև վերջին ժամանակներս մթագնել է հայ պրօլետարիատի դասակարգային գիտակցութիւնը, այդ էլ չէ կարելի բացասել, և թայֆայական բնազդները զարգացնելով մեռցրել է նրանց մէջ դասակարգային շահի գիտակցութիւնը և սնուցել է մանր բուրժուական նացիօնալիզմով և շօվինիստական հակումներն է զարգացրել. և շնորհիւ դրան է, որ հայ պրօլետարիատը յետամնաց է եղել մինչև վերջին ժամանակներս իր դասակարգային գիտակցութեամբ։ Ահա թէ ուր պէտք է փնտռել հայ բանւորի յետամնացութեան պատճառները։ Բայց Ս. Ան.-ն այդ չէ կարողանում հասկանալ, որովհետև այդ իրողութիւնը որպէս իրական փաստ՝ ձեռնտու չէ. և չէ որ նրանց իդէալը բանւորական դատը չէ, այլ հայ բուրժուազիայի շահը, և դա հասկանալի է, եթէ ի նկատի ունենանք մօտ անցեալի պատմական շրջանը...

Նոյն յօդուածում կարդում ենք. «Նա (թիւրքահայ հարցը. Ս. Բ.) իր էութեամբ բոլոր դասերին էլ հաւասարապէս շահագրգռել է»։

Այո, շահագրգռել է, բայց ոչ բոլոր «դասերին էլ հաւասարապէս»։ Հայ պրօլետարիատի գիտակից տարրերը շահագրգռված են եղել այն տեսակէտից, որ որքան շուտ լուծվի այդ հարցը, այնքան շուտ կովկասահայ աշխատաւոր ժողովուրդը ընդհանրապէս, իսկ հայ պրօլետարիատը մասնաւորապէս կազատվեն մանր բուրժուական նացիօնալիստ կուսակցութեան իդէօլօգիայի շահագործումից և դասակարգային գիտակցութիւնը մթագնելուց յանուն համայն ազգութեան։ Իսկ հայ բուրժուազիան շահագրգռված է եղել այն չափով, ինչ չափով նրա շահերն են պահանջել այդ, ապագայ ազատ Հայաստանում հիմնելու իր դասակարգային տիրապետութիւնը կապիտալիստական շահագործման սկզբունքից ելնելով, որպէս տիրապետող դաս՝ հայ իրականութեան մէջ։

№ 2-ում խմբագրական յօդուածում կարդում ենք, որ «Ռուսաստանում աշխատաւոր դասը՝ լաւ դէպքում գտնվում է ապադասակարգ ինտելլիգենցիայի հսկողութեան ու հովանաւորութեան տակ»։ Պէտք է ասել, որ այդ «ապադասակարգ» տերմինը հնացած ու անպէտքացած և վաղուց ի վեր մոռացված է այն տեսակէտից, որ ապադասակարգ կամ թէ ապադասակարգային ինտելլիգենցիա գոյութիւն չունի, այլ կան երկու հակադիր դասակարգեր իրանց իդէօլօգիաներով՝ տիրող և տիրապետվող, շահագործող և շահագործվող. և մենք տեսնում ենք, որ կեանքի մէջ մարդիկ իրանց աշխարհահայեացքով ու գործելակերպով յարում են մէկ կամ միւս դասակարգին, և միջին տեղ գոյութիւն չունի։ Ասել «ապադասակարգ», դա կը նշանակէ դիտաւորեալ կերպով քօղարկել ճշմարտութիւնը յետին նպատակով, հնարաւորութիւն ունենալու համար մթագնել բանւորի դասակարգային շահի գիտակցութիւնը և յետ կասեցնել նրան բանւորական դատին մասնակցելուց։

Ս. Բօգդանօվիչ

---

*) Забастовки Бакинскихъ нефтепромышленныхъ рабочихъ въ 1907 г. Составилъ завѣдующ. Статист. бюро Совѣта Съѣзда Бакинскихъ Нефтепромышленниковъ Фроловъ. Издан. С.-С. Б. Н. 1908 г. Баку. (Стр. 4—6)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Կեանքը Շուշու շրջանում

Շուշի, 4 յունիսի

Ահա ճիշդ երկու և կէս ամիս է, ինչ որ Շուշու գաւառը կարօտ է արևային և պարզ եղանակների. ապրիլի 1-ից մինչև այժմ անձրևն ու կարկուտը անվերջ գալիս և փտեցնում ու ջարդում են այգիների ծառերն ու արտերը։ Կարկտից յետոյ արևը մօտ երկու ժամ տաքացնելով երկիրը՝ գիւղացու մէջ յոյս է ներշնչում, թէ ահա վերջացան վատ եղանակները, անցաւ երկիւղը. բայց հազիւ նա այս հանգստացնող մտքով է զբաղված՝ երկինքը մռայլում է, ծածկվում սև, բօթաբեր ամպերով, մի քանի րոպէ էլ, և վերևից ընկնում են կարկտի հատիկները, աւելի մեծ ու աւելի կորստաբեր, փչացնում են թշուառ գիւղացու վերջին աշխատանքը, և կարկտային կոյտերի սառը շերտերի տակ ընդմիշտ թաղվում են նրա վերջին յոյսերը։

Վարանդացի գիւղացու համար մի փոքրիկ յոյս, որ եթէ մնացել է, այդ գարնանացանն է, բայց էլի վստահ չէ, որ այդ գոնէ իրան կը մնայ, քանի որ մինչև այսօր աւելորդ հեղեղներն և կարկուտը չեն դադարում իրանց աւերածութիւններն անելուց։

Մինչդեռ գիւղացիները ողբում են իրանց կորուստը, անասունները մխիթարվում են. որովհետև արօտները ծածկված են առատ ու փարթամ խոտով և նրանց ամբողջ ձմեռվայ ընթացքում խոստացվում է լաւ և առատ սնունդ։

Զգալի է թթենիներին հասած վնասը։ Այս ամառ օղեգործութիւնը, որը գիւղացիներին բաւականաչափ եկամուտ է տալիս, ոչ մի արդիւնք չի տալու, բացառութեամբ մի քանի գիւղերի, որտեղ յամենայն դէպս տուած արդիւնքն էլի չնչին է։

Խաչէն, Թարթառ ու միւս գետերը շատ են վարարել, այնպէս որ ճանապարհը վտանգաւոր է դարձել, ուստի և Շուշի եկող ամարանոցաւորների գալը դանդաղել է։

Շուշու տնատէրերն էլ կարճ ժամանակում շատ փող աշխատելու տենչանքով լցված՝ բնակիչներին դուրս են վռնդում սենեակներից և առանց երկար մտածելու առասպելական վարձով տալիս են ամարանոցաւորներին։

Մենք կարծում էինք, որ ամարանոցաւորներից շատերն ինտելլիգենտ անձինք լինելով կը գան քաղաք և շատ թէ քիչ թարմութիւն կը մտցնեն տեղական ճահճացած ու նեխված կեանքի մէջ, բայց դժբաղդաբար նրանք բոլորն էլ գործակատար, արհեստաւոր ու հասարակ վաճառականներ են։

Մի-մի անգամ Եւլախից գալիս է մի-մի աւտօմոբիլ, որին Շուշու բնակչութիւնը նայում է այնպէս, ինչպէս Ամերիկայի բնակչութիւնը նայում էր Կօլումբոսին, երբ սա այդ երկրի ափերին մօտեցաւ։

Ստեփան Շերմազան

Ընտրութեան մի օրիգինալ ձև

Գանձակ, 14 յունիսի

Անցեալ կիրակի տեղիս ս. Լուսաւորիչ եկեղեցու ծխ. ժողովը հոգաբարձական ընտրութիւն է կատարել. հարկաւոր է եղել 4 մարդ ընտրել. ընտրութիւնը կատարել են թերթիկներով և այնպէս, որ որոշ խմբակի մարդիկ իրանց թերթիկներում գրել են ոչ թէ չորս թեկնածուների անուններ, այլ մի թեկնածուի անուն չորս անգամ, և այսպէս՝ ուրեմն՝ մի ընտրող իր թեկնածուին տուել է 4 ձայն։ Ընտրողական այսպիսի մի նոր ձև կատարեալ աբսուրդ է ներկայացնում, որը կարող չէ տեղի ունենալ ոչ մի բարեկարգ երկրում, ուր տիրում են որոշ նօրմալ օրէնքներ։ Ասում են, որ կատարված ընտրութիւնների դէմ բողոք է տրըված։

Հանգուցեալ Մկ. ք. Տէր-Յովսէփեանի փոխարէն գանձակեցիները փնտռում են յարմարաւոր թեկնածու։ Այս հարցի համար հոգ. իշխանութիւնը ծխ. ժողով է հրաւիրել միայն հանգուցեալ քահանայի ծխականներից։ Ըստ մեզ՝ այդ խնդիրը վճռելու համար աւելի նպատակայարմար կը լինէր կազմել ամբողջ եկեղեցու ընդհ. ծխ. ժողով, այլ ոչ թէ մի քահանայի ծխականներից։

Ց. Խօջայեան

Լուրեր Սղնախից

Սղնախ, 13 յունիսի

Սղնախի Մարիինսկի օրիորդաց պրօգիմնազիայի III դասարանի աշակերտուհի Նունէ Մճէդլիշվիլի քննութեան ժամանակ ռուսերէնից ստանում է 2, շատ նեղանում է և խօսակցութիւն է ունենում վարժուհու հետ, թէ անարդար կերպով դրին 2։ Սաստիկ վշտացած օրիորդը խմում է կարբօլեան թթու, որից վախճանվում է։ Դէպքը ցնցող տպաւորութիւն թողեց հասարակութեան վրա։

Այս օրերս նահանգական դատարանի սեսսիայում (որը պարբերաբար գալիս է Սղնախ) նշանակված էր Նիկող. Աթաբէգեանի սպանութեան գործի քննութիւնը։ Այս գործի համար բանտարկվեցին կարդէնախցի Ն. Շաքիաշվիլի, կօշկակար Վ. Տուրիաշվիլի և հին կլուբի ծառայ Գ. Սիշմաշվիլի։ Սրանք իրանց կողմից գործի մէջ գցեցին Զաքարիա Եղիգարեանին, որը, որպէս թէ, կաշառել էր նրանց Աթաբէգեանին սպանելու համար. Եղիգարեանի դէմ դատ է սկսել նոյնպէս Աթաբէկեանի կինը, ասելով որ իր ամուսինը նրան խանութ չը տալուց, նրանք կուեցին և Եղիգարեանը սպանել տուեց իր մարդուն։ Մի քանի վկաների բացակայութեան պատճառով գործը յետաձգվեց։

N. N.

Մի ոճրագործութիւն

Գօրի, 16 յունիսի

Կիրակի, յունիսի 15-ին, գիշ. ժ. 11-ին, իր բնակարանից քիչ հեռու, անծանօթի երկու հարուածով տեղնուտեղը սպանվեց Գօրու բնակիչ վաճառական Նիկ. Մղեբրեանը 24 տարեկան հասակում։ Սպանութեան պատճառը յայտնի չէ։ Ոճրագործներից ոչ ոք բռնված չէ։ Այս այն Մղեբրեանցն է, որ անցեալ տարի, անձնական հաշիւներից դրդըված, Կուր գետը գլորեց կամուրջից Ստեփան Խիթարեանին։ Բայց վերջինս խեղդվելուց մի կերպ ազատվեց։

Արմենակ Մարութեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Կիրակի, յունիսի 15-ին, տեղի ունեցաւ պարսկական սահմանագլխում յանկարծամահ եղած արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնեայ Ա. Ե. Միլլէրի թաղումը, որին ներկայ էին հանգուցեալի եղբայրները, փոխարքայի օգնական Ն. Լ. Պետերսօն, զինուորական շտաբի պետը, փոխարքայի դիւանատան վերատեսուչը և շատ ուրիշ բարձրաստիճան պաշտօնեաներ։ Հանգուցեալը թաղվեց ուղղափառների գերեզմանատանը։

◆ Երէկ, յունիսի 17-ին, վերադարձաւ Էջմիածնից Վրաստանի և Իմերէթի թեմակալ առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը։

◆ Անդրկովկասի երկաթուղիների կայարաններում 1904 թւից գոյութիւն ունի այն որոշումը, որի համաձայն կողմնակի մարդկանց մուտքը արգելվում է կայարանի բակի սահմանը և ապրանքներ տանելու համար առանձին տուրք է վերցվում, որպիսի բան գոյութիւն չունի միւս երկաթուղիներում, ինչպէս մասնաւոր, նոյնպէս և արքունական։ Ի նկատի ունենալով որ այդ տուրքերը թիւրիմացութիւններ և բողոքներ են առաջացնում, ճան. հաղ. մինիստրութիւնը ձեռնարկել է այդ տուրքերը հաւաքելու հետազօտութեան և այդ բանը վերացնելու հարցի քննութեան։

◆ Քաղաքս է եկել «Դիզէլ» ֆիրմայի ներկայացուցիչը քաղաքի հետ պայման կապելու, որ Դիզէլի երկու շարժիչ մեքենայ սահմանի Աւճալի ջրանցքում։

◆ Սպանդագործները և միսը իրարից ջոկող ու տեսակների բաժանողները արհեստաւորաց վարչութեան միջոցով միջնորդութիւն են յարուցել նահանգապետի առաջ, որ իրանց թոյլ տրվի առանձին համքարութիւն կազմելու։

◆ Ներկայումս Թիֆլիսումն են գտնվում Պետերբուրգի Բեստուժեվեան կուրսերի աշակերտուհիները և Նօվօրօսիյսկի նահանգի Վարվարինսկի այգեգործական և գինեգործական դպրոցի աշակերտները։

◆ Այսօր, ամսիս 18-ին, Ազնուականների հողային բանկում տեղի կունենայ բանկում գրաւ դրված տների աճուրդը, այն տների, որոնց տէրերը ժամանակին վճարումները բանկ չեն մուծել։

◆ Ժողովրդական Տանը ամսիս 15-ից վերջացան ամառային սէզօնի ներկայացումները։ Նոր ներկայացումները կը սկսվեն սեպտեմբերի կէսերին։

◆ Նահանգապետը հաստատել է արհեստաւորների ակումբի կանոնադրութիւնը։

◆ Կիրակի օրը Ալէքսանդրեան ուսուցչական ինստիտուտում բացվեցին ուսուցչական դասընթացքները։ Բացման հանդէսին ներկայ էին կովկ. ուսումնարանական շրջանի կառավարիչ Ա. Ի. Սլովինսկի և 40 հոգի կուրսիստներ։

◆ Վրիպակ.—Ներքին լուրերի բաժնում Դրամատիկ. Ընկ. վերաբերեալ տեղեկութեան մէջ սպրդել է հետևեալ սխալը. գրված է թէ՝ քուէարկվելու համաձայնութիւն տուին չորս անձինք (յիշվում են անուններ), որոնց թւում և Յակ. Գենջեան. սխալ է. պէտք է լինի Յովհ. Մալխասեան։

ԿՈՎԿԱՍ

◆ Կովկասի հանքային վարչութիւնը իրաւունք է տուել Գ. Վ. Մամիկոնեանին, Կ. Ա. Մելիքեանին և ուրիշ մի քանի հոգու Գանձակի նահ. Բադա գիւղում մարգանէցի հանքի հետախուզութիւններ սկսել։

◆ Ինչպէս հաղորդում են, Բագւում կայացել է խոշոր նաւթարդիւնաբերողների խորհրդակցութիւնը, որտեղ, ինչպէս ասում են, քննվել է գործադուլաւոր բանւորներին հաշիւ տալու և հեռացնելու խնդիրը, բայց մեծամասնութեան կողմից մերժվել է այդ առաջարկը։ Վճռված է ետ կանգնել ամեն տեսակ քայլից և սպասել գործի ելքին, որովհետև նաւթարդիւնաբերները եկել են այն եզրակացութեան, որ գործադուլը երկար տևել չէ կարող։

◆ Սկիզբներում հաղորդում էին, որ Ժելեզնօվօդսկում տարածված են վարակիչ հիւանդութիւններ և եղանակները անձրևային են. այժմ տեղեկացնում են, որ ոչ մի հիւանդութիւն չը կայ և գեղեցիկ օրեր են լինում։

◆ Տեղեկութիւնների համաձայն, վերջերս շարունակ տեղացող անձրևները աննպաստ ազդեցութիւն են արել Անդրկովկասի ցանքսերի վրա։ Կախէթիայում, անձրևների շնորհիւ, առաջ է եկել սնկային հիւանդութիւն, իսկ Երևանի նահանգում և Կարսի շրջանում անձրևներից աճած անպէտք բոյսերը արգելում են բամբակի ցանքսերի աճման։ Բացի անձրևներից, ընթացիկ գարունը առատ է եղել և կարկուտով։ Կարկուտ է եկել և վնասել Ջէվանշիրի, Շարուր-Դարալագեազի, Երևանի, Էջմիածնի և Շուշու գաւառների ցանքսերը։ Դրան եթէ աւելացնենք և յաճախակի կրկնվող հեղեղները, պատկերը կատարեալ կը լինի։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պետական Դումայի դաւանաբանական մասնաժողովը ընդունեց այն կանոնները, որոնք վերաբերում են մի դաւանութիւնից միւսին անցնելուն։ Համաձայն այդ կանոնների, այն անձը, որ կամենում է մի դաւանութիւնից անցնել միւսին, տալիս է համապատասխան յայտարարութիւն նահանգապետին կամ քաղաքապետին, որ այդ մասին տեղեկացնում է երկու դաւանութիւնների հոգևոր վարչութիւններին։ 30 օր յետոյ՝ յայտարարութիւնը ներկայացնելուց հաշուած, դաւանափոխութիւնը համարվում է կատարուած։

◆ Ռուսաստանը սկզբունքով համաձայնել է մասնակցել այն միջազգային բիւրօյին, որ հաստատվելու է, համաձայն 1913 թ. Բրիւսէլում տեղի ունեցած միջազգային կոնգրէսի որոշման, զանազան երկիրների երեխաների պաշտպանութեան համար։ Արդէն մշակված են կանոններ այդ բիւրօյի համար։ Բիւրօն հիմնվում է Բրիւսէլում և բաղկանալու է մի-մի ներկայացուցչից իւրաքանչիւր կառավարութեան կողմից։ Ռուսաստանը պահանջում է յատկացնել իրան երկու ներկայացուցչի տեղ մէկի փոխարէն։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ «Սախ. Փուրց.» լրագրի ասելով՝ Կախեթում հիմնվում է կարկուտից ապահովող ընկերութիւն։

◆ Վրաց թատրոնական գործիչների առաջին համագումարը, յարգելով Ա. Ջաջանիշվիլիի արած զեկուցումը գաւառական թատրոնի գործը կանոնաւոր հիմքերի վրա դնելու մասին, հաւանութիւն տուեց զեկուցանողի այն առաջարկին, որը բարոյական պարտականութիւն է դնում գոյութիւն ունեցող վրաց դրամատիկական իւրաքանչիւր ընկերութեան և խմբակցութեան վրա, որպէսզի սրանք նշանակելով մի որոշ օր՝ տարեկան մի ներկայացում տան և նրա եկամուտը յատկացնեն գաւառական թատրոնի գործին։

◆ Նոյն համագումարը անհրաժեշտ է գտել թատրոնական բեմին ծառայողների պրօֆէսիօնալ միութիւն հիմնելու հարցը, որը կը բարւոքէ նրանց նիւթական դրութիւնը։ Բացի այդ, հարց է բարձրացված և այն մասին, որպէսզի դերասաններին նշանակվի տարեկան ռոճիկ, երկու ամիս հանգստութեան համար արձակուրդ ունենալու պայմանով։

◆ Վրաց «Սախալխօ Գազէթի» թերթի խմբագիրը 129-րդ յօդուածի համաձայն ենթարկվում է պատասխանատուութեան լրագրում վրաց եկեղեցու մասին տպած յօդուածի համար։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիֆլիսի քաղաքացի Լազար Զլատոգորսկին յայտնեց ոստիկանութեան, որ անյայտ չարագործները իր տնից իր բացակայութեան ժամանակ գողացել են 310 րուբլի արժողութեամբ զանազան տնային իրեր։

◆ Նոյն օրը Դաւիթ Զաչյանիձէ յայտնեց ոստիկանութեան, որ իր տնից յարմարեցրած բանալիի միջոցով գողացել են 30 րուբլի 60 կոպէկ և խնայողական գանձարանի գրքոյկը 600 րուբլու։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 17 յունիսի

Խնդրում եմ ձեր յարգելի թերթի մօտակայ համարում տեղ տալ իմ յայտարարութեան, որ Դրամ. Ընկ. խորհրդի անդամ պ. Ա. Նազարէթեանի իմ դէմ բարդած մեղադրանքները պարզելու համար միջնորդ դատարանի անդամ պ. Դ. Իփէկեանի Թիֆլիսից հեռանալու պատճառով, հրաւիրում եմ իմ կողմից դատաւոր պ. Վ. Ահարոնեանին։

Գար. Երիցեան

—

Մեծ-Ղարաքիլիսա, 12 յունիսի

Յայտնում ենք մեր սրտագին անկեղծ գոհունակութիւնը Վրաստանի և Իմերէթի թեմակալ Մեսրոպ եպիսկոպոսին՝ իր հայրական հովանաւորութեան, Թ. ք. Տէր-Պետրոսեանին՝ իր սրտաբաց հիւրասիրութեան և Ե. աւ.-քահ. Երզնկեանին՝ իր հոգատարութեան համար, ուստի մեր խորին շնորհակալութիւնը՝ Յովնանեան դպրոցի տեսուչ Ս. Մալխասեանցին, ուսուցիչ Մուշյանին, Եղիբեկեանին, Ն. Սարգսեանին, Ա. Մանուկեանին, տիկ. Մ. Ն. Թայիրեանին և բոլոր այն վարչութիւններին, որոնք ամենայն պատրաստակամութեամբ հնարաւորութիւն տուին մեր ընթացաւարտներին ծանօթանալ Թիֆլիսի կուլտուրական-կրթական հիմնարկութիւնների հետ։

Ի դիմաց ուսուցչական կազմի՝
Մ. Ղազարեան

—

Սուրամ, 3 յունիսի

Կարդալով «Մշակի» № 114-ում Գորուց Պետրոս ք. Վարշամեանի գրած նամակը և ի նկատի ունենալով, որ հ. Վարշամեանը ինձ վերագրում է, թէ երբ ես՝ որպէս հոգևոր կառավարութեան անդամ՝ խորհրդակցել եմ միւս անդամների հետ, գնացել նրա մօտ և «առաջուց պատրաստած թելադրութիւնը» ստորագրել տուել ծխականների հովուութիւնից հրաժարվելու իր տկարութեան և ծերութեան պատճառով, յանուն ճշմարտութեան հրապարակով յայտնում եմ, որ տէր-հայրը յեղաշրջել է իրողութիւնը և ահա թէ ինչպէս։

Հոգ. իշխանութեան կարգադրութեան համաձայն, ինձ յանձնված էին երեցփոխի և մի քանի ծխականների բողոքները հ. Վարշամեանի դէմ քննելու, նրա անհաշտ բնաւորութեան և նոյնիսկ 78 տարեկան ծերունազարդ քահանային անվայել վարմունքների մասին, որպիսի քննական գործերը գտնվում են վճռական ատեանում. տէր-հօր ձեռնադրութեան օրից թէ որքան քննական գործեր կարելի է գտնել կօնսիստօրիայի արխիվում, ես այդ մասին լռում եմ։

Որքան յիշում եմ, իմ նախագահութեամբ կայացած ծխ. ժողովում՝ ծխականների կողմից միաձայն առաջարկվեց տէր-հօրը հրաժարվել կամովին իրանց հովուութիւնից։ Հ. Վարշամեանը ծխ. ժողովին խոստացաւ կատարել այդ և մի քանի օրից յետոյ ներկայացրեց հոգևոր կառավարութեանը իր պատճառաբանված հրաժարականը՝ ծերութեան և տկարութեան պատճառով, խնդրելով ծխականների հովուութիւնը յանձնել մի ուրիշի. հոգևոր ատեանի կողմից պատշաճ ընթացք տրվեց նրա հրաժարականին։ Այս բոլորը կարող են հաստատել թէ այն ժամանակվայ երեցփոխը և թէ ծխականները։

Աւելորդ չեմ համարում յայտնել և այն, որ հ. Վարշամեանը բողոքել էր իմ դէմ հոգևոր իշխանութեանը, որ իբր թէ ես պատրաստի գրված հրաժարականը տարել եմ իրան մօտ, հիւանդ պառկած ժամանակ, երբ ինքը զառանցանքի մէջ էր, և ստորագրել տուել նրան, այն ինչ՝ որպէս անհերքելի ապացոյց՝ հոգևոր իշխանութեան առաջն է դրված իր սեփական ձեռքով գրված հրաժարականը։

Անդամ Գորու հայոց հոգևոր կառավարութեան՝
Յովսէփ ա. ք. Աւրեմեան

—

Թիֆլիս, 2 յունիսի

Ինչպէս յայտնի է, հայ ուսուցիչների համար կազմված է ֆոնդ՝ կենսաթոշակի համար, մի քանի հարուստներ նուիրել են խոշոր գումար այդ նպատակի համար ուսուցիչների անունով. ֆոնդի տնօրէնութիւնը յանձնված է Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդին։

Ես հայ եկ.-ծխ. դպրոցներում վարել եմ ուսուցչ. պաշտօն մօտաւորապէս կէս դար (45 տարուց աւելի)։ Այժմ ծերացել և ուժասպառ եմ (72 տարեկան), շրջապատված վեց հոգուց բաղկացած ընտանիքով, ու մեծ կարօտութեան մէջ եմ. երևակայեցէք, որ այս ձմեռ առանց վառելիքի անցկացրի՝ միջոց չունենալուս պատճառով, իսկ թէ ինչ սնունդ ունէի և ինչպէս եմ ապրում, այդ Աստուծուն է յայտնի։

Ապրուստի միջոցի պակասութեան պատճառով, անցեալ տարի դիմեցի խնդրքով Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդին, խնդրելով յատկացնել ինձ կենսաթոշակ այն գումարի տոկոսներից, որ Ընկ. տրամադրութեան տակն է։

Ընկ. մասնաժողովը, որ ուսուցիչներից է բաղկացած, որոնք հարիւրներ են ստանում ամսական, որոշել էր յատկացնել ինձ 10-ական ռ. ամսական մինչև մահ։ Թէև նոյն տարվայ նոյեմբերից մինչև այս տարվայ մայիսի 1-ը ստանում էի այդ չնչին գումարը, միայն այդպիսի անարդար վճռի դէմ, որ խորհուրդը հաստատել էր, բողոքեցի, թէ կեանքի այս ծանր պայմաններում 10 րուբլով ես ինչպէս ապրեմ ու ընտանիք պահեմ։ Խորհուրդը, փոխանակ ուշադրութիւն դարձնելու իմ անհերքելի դրութեան վրա, այս մայիսին նոր որոշում է կայացնում՝ «Կենսաթոշակ տալ այն ուսուցիչներին, որոնք այժմ ծառայում են և որոնց ծառայութեան ժամանակ կազմվել է ֆոնդը»։ Այս հիման վրա՝ 10 րուբլին էլ դադարեցրին տալուց։

Ասացէք խնդրեմ, ես մեղաւոր եմ, որ իմ պաշտօնավարութեան ժամանակ չը կար ֆոնդ։ Նուիրատուները նուիրել են յանուն հայ ուսուցիչների, ոչ մի պայման չեն դրել թէ որ ուսուցիչներին տալ. խորհուրդը այս դէպքում անարդարութիւն է գործում և ինձպէս երկարամեայ ծառայողին սովի մատնում։

Ամեն օրէնքում բացառութիւն կայ. խորհուրդը ինձ համար կարող էր—եթէ իր որոշումը չէ կամենում փոխել—բացառութիւն կազմել, ի նկատի առնելով, որ իմ չափ ծառայած այլ ևս ոչ ոք չը կայ. բայց չը գիտեմ ինչ նկատի ունենալով՝ ինձ մերժում է, քանի որ իրաւունք չունի։

Ուսուցիչ Ստեփաննոս Տէր-Սարգսեան

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ադանա, 4 յունիսի

«Մշակի» № 106-ին մէջ (մայիս 18) վերին աստիճանի զարմանքով կարդացուեցաւ «Հայկազուն» ստորագրութեամբ Թաւրիզի թղթակցութիւնը, որով կը հաղորդուէր, «աւագ սարկաւագ Սահակ անունով մին, Սսի միաբանակից, Կիլիկիայի կաթողիկոսի հրամանով և հրահանգով Պարսկաստան—Հիւսիսային և Հարաւային—և Հնդկաստան է ուղարկվում Ադանայի մէջ հիմնվելիք բարձրագոյն միջնակարգ մի կրթարանի համար հանգանակութիւն անելու»։

Նորին սրբութեան հրամանաւ արտօնուած ենք յայտարարելու, որ Սսոյ միաբանակից Սահակ անունով սարկաւագ չկայ, եթէ ըլլար իսկ, մինչև այն նպատակաւ առանց Ընդհանրական Հայրապետի հաճութեան և սրբատառ կոնդակի սարկաւագ մը կամ աւելի բարձրաստիճան հոգևորական մը չէր ղրկուեր։

Ով որ է կեղծ սարկաւագը և յանուն Կիլիկիոյ նպաստահաւաքը, պարզապէս բաղդախնդիր խաբեբայ մըն է, և եթէ ձեռքը թղթեր ունի, անպատճառ խարդախեալ են։ Կը խնդրուի բարձրապատիւ թեմակալներէ և եկեղեցեաց պատուելի հոգաբարձութիւններէն, որ ոչ միայն չընդունին և չըսպասեն, նաև հաճին ձեռքը գտնուած կեղծ թղթերն առնել և ղրկել Կիլիկիոյ կաթողիկոսարանը ի Սիս։

Քարտուղար կաթողիկոսարանի՝
Գիւտ եպիսկ. Մխիթարեան

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 17 յունիսի

Թիֆլիսի որբ և չքաւոր հայ երեխաներին օգնող «Լոյս» Ընկերութեան վարչութիւնը յօգուտ իր ձրի դպրոցի ստացաւ տիկին Սոֆիա Կարապետեան Ղազարեանից իր հարսի՝ Լիւբովս Մուխաֆեանի գերեզմանի վրա պսակ դնելու փոխարէն՝ 20 ր., որի համար յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

Վարչութիւն

—

Թիֆլիս, 17 յունիսի

Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը ստացել է ի յիշատակ հանգուցեալ տիկ. Սոֆիա Շիրինեանի գիւղական գրադարան-ընթերցարաններ հիմնելու համար նուէրներ հանգուցեալի որդի Կարապետ և նրա ամուսին Աղաւնի Շիրինեաններից 100 ր., Արսէն քահանայ և նրա ամուսին Հայկանդուխտ Սիմէօնեաններից 25 րուբլի, ընդամենը 125 ր., որի համար խորհուրդը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

Խորհուրդ

—

Թիֆլիս, 13 յունիսի

Նորաշէնի ս. Մարիամեան օրիորդաց ուսումնարանը ստացաւ Թիֆլիսի քաղաքային Վարկի Ընկերութիւնից նպաստ 100 ր.։ Հոգաբարձութիւնս յայտնում է այդ նուիրաբերութեան համար իր խորին շնորհակալութիւնը։

Հոգաբարձութեան նախագահ՝
Սարգիս ա. ք. Շիոյեանց

—

Թիֆլիս, 14 յունիսի

Կովկասի Հայուհեաց Որբախնամ Ընկ. վարչութիւնը ստացել է Ի. Ե. Պաւլեանից 15 ր. պսակի փոխարէն ի յիշատակ հանգուցեալ Ն. Ի. Միրիմանեանի, 10 ր. Պ. Բ. Խոսրովեանից երեխաներով և 20 ր. անյայտ մի անձնաւորութիւնից՝ հանգուցեալ Ն. Ի. Միրիմանեանի յիշատակին, որի համար վարչութիւնը յայտնում է խորին շնորհակալութիւն։

Կովկասի Հայուհեաց Որբախնամ Ընկ. վարչութիւնը նուիրել է 15 ր. յօգուտ որբանոցի, հանգուցեալ Ն. Ի. Միրիմանեանի յիշատակին։

Վարչութիւն

—

Թիֆլիս, 14 յունիսի

Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը շնորհակալութեամբ ստացել է հետևեալ նուիրատուութիւնները. եղբ. և քոյրեր Միրիմանեաններից ի յիշատակ հանգուցեալ Եկատերինա Իվ. Միրիմանեանի՝ քելեխի փոխարէն յօգուտ աշակերտական ձրի և էժանագին ճաշարանի՝ 75 ր.։ Յօգուտ աղքատաց.—Տիկ. Մարիամ Անանեանից 23 կտոր հնոտի շորեր։

Խորհուրդ

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ

ԿԻՆԸ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ

VI

Ռուս կանանց կազմակերպված շարժումի արտայայտիչ պէտք է համարել և կանանց առաջին համառուսական համագումարը, որը տեղի ունեցաւ 1908 թւին։ Համագումարի անդամների թիւը համնում էր 1053-ի։ Ամբողջ կուլտուրական Ռուսաստանը ի դէմս իր լաւագոյն ներկայացուցիչների ողջունեց կանանց առաջին համառուսական համագումարը. ողջոյնի ուղերձներ ստացվեցին և Արևմտեան Եւրոպայի բոլոր ծայրերից՝ Անգլիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից և այլն։ Համագումարը տևում է մի շաբաթ. կարդացվում են բազմաթիւ զեկուցումներ, լուսաբանվում են մի շարք հարցեր, ընդունվում են բանաձևեր կնոջ իրաւական դրութիւնը բարելաւելու մտքով։

Համագումարը միաձայն գալիս է այն եզրակացութեան, որ միակ միջոցը, որպէսզի կինը ըէալ ույժ ներկայացնէ թէ հասարակական և թէ պետական կեանքում, պէտք է լինի կանանց կազմակերպված գործունէութիւնը, ամբողջ ույժերի լարումը քաղաքական իրաւունքներ ստանալու համար, որպէս գլխաւոր գործօնի կնոջ լիակատար ազատագրութեան գործում։

Եւ, արդարև, կանանց կազմակերպված գործունէութիւնը խթան է լինում մեր օրէնսդրական պալատների ուշադրութիւնը դարձնելու կանանց իրաւական դրութեան վրա. եթէ վերջին տարիներս կանանց քաղաքացիական իրաւունքների հարցը յաճախ քննութեան է առնվում մեր օրէնսդրական հաստատութիւններում, դրան յայտնի չափով նպաստում են կանանց վերոյիշեալ կազմակերպութիւնները։ Ճիշդ է, կանանց իրաւունքների ընդլայնման օրինագծերը մեծ մասամբ անաջողութեան են հանդիպում, գլխաւորապէս մեր վերին պալատում։

Ինչպէս յայտնի է, անցեալ տարի Պետական Խորհրդում տապալվեց կանանց փաստաբան լինելու օրինագիծը։ Իրաւաբանական կրթութիւն ստացած և նոյն իսկ իրաւունքի դոկտորի կոչում ձեռք բերած կինը արգելվում է կեանքի մէջ գործադրել իր գիտութիւնը. այդպիսի մի դրութիւն ոչ մի քննադատութեան չի դիմանայ. և սակայն նա չէ ընդունվում մեր վերին պալատում։ Շատերը յիշում են երևի կանանց փաստաբանութիւն անելու մի շարք հակառակորդների՝ արդարադատութեան մինիստր Շչեգլօվիտօվի և միւսների ճառերը օրինագծի դէմ։ Այդ ճառերում նրանք չը կարողացան բերել և ոչ մի կշիռ ունեցող արգումենտ, ոչ մի հիմնաւորված, լուրջ պատճառաբանութիւն օրինագծի դէմ. մինչդեռ օրինագիծը պաշտպանում էին իրաւական աշխարհի այնպիսի խոշոր, փայլուն ներկայացուցիչներ, ինչպէս Կոնի, Տագանցեվ և ուրիշներ։

Մենք յաւակնութիւն չունենք այդ խոշոր անուններից յետոյ ճառեր ասելու յօգուտ կանանց փաստաբանական գործունէութեան. մենք կուզէինք ասել միայն, որ ունենալով այդպիսի կողմնակիցներ՝ կարելի է ապահով լինել, որ եթէ ոչ այսօր, գոնէ վաղը այդ հարցը կը լուծվի յօգուտ կանանց, որ դա միայն ժամանակի հարց է։

Ինչպէս յայտնի է, վերջին տարիներս մեր օրէնսդրական պալատների բովից անցան կնոջ իրաւական դրութիւնը բարելաւող մի շարք օրինագծեր ևս. կինը իրաւունք ստացաւ ամուսնուց անկախ անցագիր ստանալու ու բաժան ապրելու։ Կանանց ժառանգական իրաւունքների հաւասարեցման հարցը անցաւ Պետական Դումայում և կրճատվեց Պետական Խորհրդում։ Պետական Դումային օրինագծեր են առաջարկված կանանց գործարանային տեսչուհիներ և հարկային տեսուչների օգնականուհիներ նշանակելու մասին։ Մշակված են և մի շարք ուրիշ օրէնսդրական ենթադրութիւններ կնոջ իրաւական դրութիւնը բարւոքելու մտքով։ Թէև պէտք է ասել, որ Ռուսաստանում կնոջ իրաւական դրութիւնը աւելի բարձր է, քան Արևմտեան Եւրոպայի մի շարք երկիրներում։

Կանանց քաղաքացիական իրաւունքների ինտենսիվ ընդլայնմանը մեծ խոչընդոտ են հանդիսանում Պետական Խորհրդի պահպանողականները, բայց և այնպէս, ամենքի համար պարզ է, որ կնոջ ազատագրութեան հարցը Ռուսաստանում առաջ է գնում հաստատ քայլերով։

Սոֆիա Դանիէլ-Բէկ

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս, 2 յունիս

Ազգային ժողովը վերջապէս ձեռք առաւ ազգ. տուրքի խնդիրը։ Նորատունկեան յաջողեցաւ իր խոստումը իրագործել՝ ատենապետաց դիւանին մէջ զանազան ծրագիրներէն քաղուածաբար առնուած կանոնագիր մը կազմելով, որուն վրայ ժողովը վիճաբանիլ սկսաւ և անոր հինգ յօդուածները վաւերացուց։

Ասանկ չէ որ անշուշտ կրնան շահագրգռել մեր ռուսահայ եղբայրները, որոնք տեղական հանգամանք ունեցող այս խնդրով բնական է թէ այնքան չեն հետաքրքրուիր։

Սակայն ընդհանուր ազգային շահագրգռութեան արժանի երևոյթ մը պարզուեցաւ այս տուրքի կանոնագրին առթիւ, որ պէտք չէ անուշադիր թողուլ, վասնզի անիկա իր կարևորութիւնն ունի։

Տուրքի այս կանոնագրով կը նուիրագործուէր կարևոր սկզբունք մը, որ էր.

Ընթացիկ տարւոյ տուրքը վճարած ըլլալ՝ երեսփոխանական ընտրութեանց մասնակցելու իրաւունք ունենալու համար։

Ասիկա սահմանադրութեան օրէնքին ուղիղ մեկնութիւնն էր, որ հաշտ չէր դաշնակցականներու տեսակէտին, որոնք ամեն ընտրութեանց մէջ իրենց շարժուն բանակներովը մեծամասնութիւն կազմելու ջանքեր կընէին և, թաղէ թաղ տեղափոխուելով, կարևոր դեր մը կը կատարէին, միևնոյն տարուան ընթացքին բազմաթիւ թաղերու մէջ միանգամայն ընտրութեանց մասնակցելով։

Այդ մարդիկը, այդ կերպով, կը գործադրէին իրենց ազգային իրաւունքները, առանց սակայն կատարած ըլլալու իրենց ազգային պարտքերը, վասնզի անոնք ոչ ազգային տուրք կուտային և ոչ ալ եկեղեցւոյ մը մատակարարութեան կը նպաստէին կոպէկով մը։

Այս սանձարձակութեան սահման դրուիլը հաշտ չէր Դաշնակցութեան շահերուն, ուստի բուռն կերպով պայքարեցան այս յօդուածին դէմ և անոր ընդունելութեան հակառակեցան, պահանջելով որ տուրք չտուողներն ալ մասնակցին ընտրութեանց։

Սակայն իրենց այս պնդումները օգուտ չունեցան, և օրէնքը ընդունուեցաւ նոյնութեամբ։

Ասով՝ դաշնակցականները պիտի հարկադրուէին նախ իրենց պարտքը կատարել և ապա իրենց իրաւունքը կիրարկել, ինչ որ բացարձակ արդարութեան համապատասխան պիտի ըլլայ, և անոր համար է, որ թերևս շատ հաճոյ չի թուիր դաշնակցականներու, որոնք միայն առնել գիտեն՝ առանց բան մը տալու։

Շատ գեղեցիկ հատուած մըն էր այս առթիւ Հայկ Խօճասարեանի պատասխանը՝ այս սկզբունքին ջատագովներուն դէմ, երբ դիտել կուտար թէ պարտքերն են, որ իրաւունքները կը ստեղծեն, և մանաւանդ երբ ի վեր կառնէր սա ճշմարտութիւնը, թէ կուսակցականք՝ իրենց կուսակցութեան անդամներուն կանոնաւոր վճարումներովը միայն կրնան մնալ նոյն կուսակցութեան անդամ և առանց անոր կը վտարուին շարքերէն։

Երբ կուսակցութեան մը անդամ մնալու խնդիրը կը ստորադասուի դրամի խնդրոյն, որչափ աւելի ևս կրնայ ազգային երեսփոխանական ընտրութեանց մասնակցելու իրաւունքը՝ ազգային տուրքը վճարած ըլլալու պայմանին կապուիլ։

Խօճասարեան կրնար անշուշտ ուրիշ օրինակներ ալ տալ, սակայն խնայեց։

Մանաւանդ շատ զարմանալի է, որ դաշնակցականները կը մոռնան իրենց առանց ազգային ժողովներու գիտութեան և հաւանութեան Տարօնի և Վասպուրականի հայ բնակչութեան վրայ դրած կրթական տուրքը, զոր վճարել հարկադրելու համար չէին բաւականացած միայն ընտրողութեան իրաւունքէ զրկելու չվճարողները, այլ յայտնի է թէ մարմնական պատիժներու իսկ ենթարկելու յանդգնութիւնը ունեցած էին, պատիժներ, որոնց արձագանգը շատ հեռուները հասաւ։

Կրթական տուրքի անունով խոշտանգումներ իսկ գործադրել իրենց կուսակցութեան իրաւունք համարող դաշնակցականներ, հիմա, ժողովուրդին ընտրական իրաւունքէն զրկուելն իսկ աններելի կը համարին, կերևայ թէ մոռնալով տակաւին մեր մտքին մէջ շատ վառ մնացած դէպքերու յիշատակութիւնը։

Ողբալի մոռացումներ։

Շաւայլ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

Վան, 26 մայիսի

Գրել էի, որ Վարագի վանքի Սալախանէ անունով գիւղը քիւրդ Հասան աղայից յետ առնելու և վանքին վերադարձնելու համար գործ է սկսված ու այդ նպատակով ոստիկանութեան տնօրէնը Սալախանէ է գնացել։ Այդ պաշտօնեան մի քանի օրից յետոյ վերադարձաւ առանց մի արդիւնքի հասնելու։ Ասում են, որ ճարպիկ աղային աջողվել է համոզել նրան իր ունեցած իրաւունքների մասին, իսկ թիւրք պաշտօնեան հետևել է աւելի շուտ իր անձնական միտումներին դէպի Հասան աղան, քան թէ իր պարտականութեան։ Վալի Թահսին-բէյը քաղաքս է կանչել Հասան աղային՝ գործը այստեղ մի վախճանի բերելու համար։ Եթէ համոզելով է, որ պիտի աջողվեն գիւղը յետ առնել բռնագրաւող քիւրդից, այդ նշանակում է, որ կառավարութիւնը չի ուզում ճնշումն ի գործ դնել, իսկ առանց սրան ոչ մի բան գլուխ չի գայ. աղան մի խիստ կարևոր որս—որից տարէ-տարի հազարներ է շահում—դիւրութեամբ բաց չի թողնի։ Յիշեալ քիւրդը, որ 20—25 տարի առաջ մի աղքատ մարդ է եղել, այսօր, ասում են, Սալախանէ գիւղից ստացած արդիւնքների շնորհիւ աւելի քան 10,000 ոսկու հարստութեան տէր է, ունի մի քանի հազար ոչխարներ ու տաւարներ, ու զարմանալի չէ, որ աջողում է համոզել ոստիկանութեան պետին, ինչպէս որ տարիներով համոզել է վալիներին և պատշաճաւոր վարչութիւններին ու իր ձեռքը պահել մի թանգագին կալուած, ինչպէս Սալախանէն է։

Մտրակ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

(Նրա ներքին նկարագրութիւնը)

Պարիզ, 8 յունիսի

Յունիսի 1-ին (Պենտէկոստէի երկուշաբթի օրը)—հակառակ որ այդ օրը թէ կրօնական և թէ պետական մեծ տօն էր—ֆրանսիական պարլամենտը բացվեց։ Սահմանադրութեան հիմնական օրէնքներից մին անողոքաբար պահանջում է, որ նորընտիր պատգամաւորները, առանց այլևայլութեան, նիստ գումարեն ընտրութիւններին յաջորդող յունիսի 1-ին՝ թէկուզ նա մի տօն օր լինի։ Dura lex sed lex... (խիստ օրէնք, բայց օրէնք)։

Ուրեմն յունիսի 1-ին Բուրբոնեան պալատում ներկայ էին գրեթէ բոլոր պատգամաւորները։ Նորընտիրները, մանաւանդ, սկսնակի կամ նորահաւատի յատուկ, գրեթէ պատանեկան եռանդով փութացել էին դէպի այն շէնքը, որի գմբէթի տակ, եթէ Աստուած իրանց կեանք պարգևի, չորս տարի անընդհատ աղաղակելու, գոռալու, գոչելու, խնդալու, նախատելու, հայհոյելու, ռռնալու և... օրէնսդրելու իրաւունք ստացան ֆրանսիական ժողովրդից, 15,000 ֆր. համեստ ռոճիկի փոխարէն։ Ամենայն փութկոտութեամբ նրանք արդէն ընտրեցին մի նախագահ, մի քանի դեր-նախագահներ և կէս դիւժին քարտուղարներ, որպէսզի այս ամսի վերջերին գործի սկսեն։

Արդ, քանի որ տակաւին դադարի ժամանակ է և պարլամենտը պաշտօնապէս փակ, չէինք կամենայ, յարգելի ընթերցող, մի պտոյտ անել Բուրբոնեան պալատում, մի վեր ի վերոյ ակնարկ ձգել նրա ներքին բաժանմունքների, կարգ ու սարքերի, մութ անկիւնների, ծակ ու ծուկերի վրա։ Ձեզ հաւատացնում եմ, ինչ որ այստեղ տեսնելու ենք մենք օտարներս՝ անծանօթ են ոչ միայն ֆրանսիացի հասարակութեան, այլ և պատգամաւորների շատ շատերին, որոնք ոչ ժամանակ ունեն և ոչ էլ հետաքրքրութիւն նման բաներով զբաղվելու....։

Առաջ, ուրեմն։

Մտնենք Université փողոցի այն գեղարուեստական և ահագին դռնից, որ բացվում է շքաբակի վրա և որից՝ 1830-ին անցկացաւ Շարլ X թագաւորը — մենք փոքր մարդ չենք հօ՞—նորակազմ պալատի բացման հանդէսը կատարելու։ Ընդարձակ բակի աջն ու ձախը լերկ և բարձր պատեր՝ պատուհաններով ծակոտված։ Ամբողջ շէնքի գետնայարկի սենեակներն ու սրահները բացարձակապէս յատկացվել են բիւրօներին, իսկ վերևի յարկը՝ բնակութեան։ Այո, բնակութեան. որովհետև՝ պէտք է իմանալ, որ Բուրբոնեան պալատում ձրիաբար բնակւում են... 106 ընտանիք, որոնց եթէ իւրաքանչիւրը բաղկացած լինի 3 կամ 4 անդամից, մի պարզ թուաբանական գործողութիւնով կարող էք իմանալ պալատում բնակվողների թիւը։ Աւելորդ է ասել, որ այնտեղ բնակվողները միայն պաշտօնեաներ են, որոնք, իրանց վարած պաշտօնի կարևորութեան համեմատ, առաւել կամ նուազ ընդարձակ բնակարաններ ունեն իրանց տրամադրութեան տակ։ Սակայն և այնպէս պարլամենտի պալատում պաշտօնավարողների և ծառայողների ամբողջութիւնն այնտեղ չի բնակվում. նրանց բացարձակ մեծամասնութիւնը, տեղի պակասութեան պատճառով, ստիպված է լինում պալատից դուրս բնակարան վարձել։ Յարմար է այստեղ ասել, որ Բուրբոնեան պալատի մշտական պաշտօնեաների և ծառայողների թիւն է 325, որոնք բաժանվում են հետևեալ կերպով.

		Պաշտօնեայ
Պարլամենտի նախագահն ունի		11
Նոյն նախագահի բիւրօն	»	6
Վերլուծական խմբագրութիւն	»	14
Սղագրութեան բիւրօն	»	25
Օրէնքն. շարադրութեան բիւրօն	»	15
Գանձադիւանը (Questure)	»	8
Գրադարանն	»	7
Արխիւն	»	5
Դրամարկղն	»	3
Իրեղէնների համար	կան	5
Այլ և այլ	»	21
Բարապան (շվէյցար) և օգնականներ	»	73
Ծառայ	»	132

Այս մի քանի հակիրճ տեղեկութիւններից յետոյ, եթէ ուզում էք, մտնենք պալատ։ Աջ կողմի առաջին ցած դուռը մեզ ներս է հրաւիրում՝ Հրամեցէք, հրամեցէք, մտէք համարձակօրէն... «Մշակի» բոլոր ընթերցողները կարող են ամեն ինչ տեսնել այսօր—մի շնորհք, որ ամեն հասարակ մահկանացուի հեշտութեամբ չի բաշխվում,—որովհետև մեր առաջնորդն է Բուրբոնեան պալատի՝ եթէ ոչ ամենամեծ անձնաւորութիւնը, գէթ, ապահովաբար, ամենաազդեցիկը՝ վճարող գանձապետը, պ. Սուբի, որ հակառակ իր բարձր դիրքին և 70-ամեայ հասակին՝ անպատում բարութեամբ զիջում է մեզ առաջնորդել Բուրբոնեան պալատի նեղ ու լայն անցքերով։

— Merci..! չէ՞։

Յիշեալ ցած դռնից մտնելով մենք նախ այցելում ենք արխիվը և դրամարկղը։ Արխիվում, 1814-ից ի վեր—ուղիղ մի դար—հաւաքվել, բարդվել և դասաւորվել են պարլամենտարական կեանքի վերաբերող ամենայն ինչ՝ առաջարկված օրէնքների սևագրերը, յանձնախմբերի և մասնախմբերի զեկուցումները, ընտրութիւնների ամբողջական տեղեկագրերը. այնտեղ են նոյնպէս այն հազարաւոր ծրագրերն ու խնդրագրերը, առաջարկութիւններն ու որոշումները, որոնք ամեն տարի, Ֆրանսիայի և նրա գաղութների զանազան անկիւններից, երկնառաք ցօղի նման թափվում են Բուրբոնեան պալատի գլխին և այնտեղ... քնում են իրանց վերջի՜ն նիրհը։ Այստեղ է խմբագրվում նաև այն սքանչելի վերլուծական ցանկը, որ թոյլ է տալիս մի րոպէում իմանալ որևէ մի օրէնքի բոլոր ելևէջները, նրա ամբողջ կեանքը, curriculum vitae (կեանքը)՝ սկսած այն րոպէից, երբ նա մի պարզ ծրագիր էր, մինչև այն րոպէն, ուր նա մի ձև զգեցած հռչակվել է իբր օրէնք։

Մտնենք այժմ դրամարկղի խորհրդաւոր վայրը։ Բայց նախ մի խաչ հանենք երեսներս, որովհետև ոտք ենք դնում պալատի ամենաազդեցիկ անձնաւորութեան՝ վճարող գանձապետի... արքայութեան շեմքում. ինչու սակայն, գուցէ հարց տաք, այդ անձնաւորութիւնը պալատի ամենաազդեցիկն է և որի միայն անունը թէ բոլոր պատգամաւորներին և թէ բոլոր պաշտօնեաներին ու ծառայողներին ահ ու սարսափ է ազդում։ Որովհետև վճարող-գանձապետից է կախված նրանց ամսաթոշակը. նրա կամքից է կախված պարտատէրերի կողմից ամսաթոշակների վրա դրված արգելքը ընդունել կամ մերժելը...։ Եւ ո՞վ է այն պատգամաւորը, ծառայողը, պաշտօնեան, որ պարտք չունի՝ առաւել կամ նուազ կարևոր։ Ուստի ամենաբարձր, ամենազօրաւոր պատգամաւորից սկսած մինչև ամենախոնարհ ծառայողը՝ վճարող գանձապետի հետ վարվում է ինչպէս ծառաները իրանց տիրոջ հետ. ժողովում գոռացող առիւծները սրա առաջ փոքրիկ քօթօթներ են դառնում՝ միշտ պատրաստ նրան ծառայելու, նրա ամենափոքր կամքը կատարելու...։ Չը պէտք է մոռանալ, որ պատգամաւորները, տարին 12 անգամ այստեղ են գալիս պետութեան իրանց յատկացրած 15,000 ֆրանկի 12-րդ մասը գանձելու, եթէ միայն վճարող գանձապետը որևէ արգելք չէ դրել նրա վրա գետնից բսած մի աներես պարտատիրոջ անսալով...։ Հակառակ նրա մէջ կատարված փողային ահագին շարժումին—որը երբեմն միլիօնից շատ է անցնում ամսական—դրամարկղի բիւրօն բաղկացած է երկու համեստ սրահներից, որից մէկում թագաւորում է վճարող գանձապետը, իսկ միւսում իր ստորադրեալ պաշտօնեաները։ Այստեղից դուրս գալուց առաջ չը մոռանամ մի մանրամասնութիւն, որ մի նկատելի եզակիութիւն է. պարլամենտականներին տրված փողը միշտ նոր-նոր է. այսինքն նրանց վճարում են փողերանոցից նոր դուրս եկած բոլորովին կոյս փողով (ոսկի կամ արծաթ) և կամ Բանկ դը Ֆրանսի մամուլի տակից նոր ելած թղթադրամով։

Մի քիչ աւելի հեռու, ձախ կողմում, գտնվում է տէլէֆօնի սրահը. 8 պօստեր պարլամենտը միացնում են Պարիզի և գաւառների հետ։ Այստեղից—իբր պաշտօնական վայր—հեռաձայնողը հասարակ մահկանացուներից միշտ առաջ է անցնում։ Ահա գտնվում ենք Կազիմիր-Պէրիէ սրահի դիմաց. սրա կենտրոնում ոսկէ տառերով փայլում է Միրաբօյի, Լուի XVI-ի մարդկանց ուղղած խրոխտ խօսքերը՝ Allez dire à votre maitre... (Գնացէք ասէք ձեր տիրոջ...)։ Այս սրահի աջ և ձախից մեկնող մի քանի աստիճան սանդուղքներից բարձրանանք և մեզ դիմաւորող դռներից մտնենք ներս... Ահա այս է նիստերի սրահը։

Բա՛, բա՛, բա՛... այս ինչ բան է. ի՜նչ շքեղութիւն, ի՜նչ զարդարանք, ի՜նչ փարթամութիւն... Ա՞յս է դեմօկրատիկ կոչված մի պետութեան, մի ժողովրդի պատգամաւորների ժողովարանը... սա արդէն մի դրախտ է ինքնին, էլ ինչ է լինելու արդեօք մի արիստօկրատիկ ժողովրդի պատգամաւորների ժողովատեղին։ Կիսալուսնի ձևով մի ընդարձակ սրահ է սա, որի տրամագիծն է 30 մետր և բարձրութիւնը 16։ Նա այժմ պարունակում է 602 բազկաթոռ (պատգամաւորների համար միայն)՝ ամֆիթատրօնի ձևով սարքված։ Այս ընդարձակ սրահը ոչ մի պատուհան չունի։

Ուրեմն ինչպէս օդ և լոյս է ստանում։

Ահա թէ ինչպէս։ Օդը ուղղակի ներս չի թափանցում. ժողովարանից մօտ 100 մետր հեռու գտնվող մի ներքնայարկում մի ահագին հովհար (ventilateur) կայ հաստատված. սրա հայթայթած օդը անցնում է շոգարձակների (radiateur) միջից, որոնք նրան տալիս են եղանակին յարմար տաքութեան աստիճան. յետոյ զանազան նեղ անցքերից, նա մուտք է գործում մի մասնաւոր սրահ, ուր նա թողնում է իր վնասակար տարրերից մեծագոյն մասը. վերջապէս այստեղից էլ, զանազան տօթարերաններից, նա տարածվում է ժողովասրահում։ Սրահում տաքացած օդը ձգտում է, բնականաբար, վեր բարձրանալ և խուսափում է մի շարք ծակերից, որոնք գտնվում են կիսալուսնաձև առաստաղի շուրջը։ Մի երկրորդ հովհար, որ հաստատվել է ձեղունամիջում, նպաստում է ապականված օդի պարպվելուն։ Հակառակ այս զգուշութիւններին սրահի օդը միևնոյն չէ մնում երբէք. բաւական է որ կէս-թափուր սրահը յանկարծ լցվի պատգամաւորներով, 5 րոպէ չանցած ջերմաչափը 3—4 աստիճան աւելի կը նշանակի։ Այս պարագային մի պաշտօնեայ, որ բազկաթոռների տակ, մի փոքրիկ խցիկում, պահվել է (չիմացողներին բոլորովին անտես), տէլէֆօնով մի հրաման կարձակի դէպի ներքնայարկ, և իսկոյն շոգարձակների ոյժը չափաւորել կը տայ։ Ասենք, որ իր օդը սառեցնելու կամ տաքացնելու համար պարլամենտը ծախսում է տարեկան 80,000 ֆրանկ։

Ասացինք, որ սրահը պատուհանից բոլորովին զուրկ է, բայց և այնպէս օրվայ կամ գիշերվայ որ ժամին որ այնտեղ մուտք գործէք՝ արևոտ կէսօրվայ նման լոյս է այնտեղ։ Այդ արուեստական լոյսը նա ստանում է մի լուսաւոր առաստաղից, որ գրաւում է սրահի կենտրոնը։ Այդ առաստաղը շինված է անողորկ ապակուց։ Նրա ետևը գտնվում են 766 էլեքտրական լամպաներ, որոնցից 500-ը 50-ական մոմի զօրութեամբ և 266-ը 34-ական մոմի. ուրեմն 34,044 մոմեր ժողովասրահին տալիս են ցերեկվայ կատարեալ լոյս, երբ արդէն կէս գիշեր է։

Չորս աստիճանի է բաժանվում լուսաւորութիւնը. առաջինը խիստ աղօտ, առանց նկատել տալու, անցկացնում է ցերեկվայ լոյսից արուեստական լոյսին. երկրորդն ու երրորդը բացվում են վերջալոյսի և կատարեալ մութի ժամանակ, իսկ չորրորդը բացվում է կարևոր նիստերի և տաք վիճաբանութիւնների ժամանակ։ Ներքնայարկում գտնվող մի կատարեալ գործարան էլեքտրականութիւն է հայթայթում այդ լուսաւորութեան, որի համար ծախսվում է տարեկան 85,000 ֆրանկ։

Նախ քան սրահից դուրս գալը՝ մի ակնարկ ձգենք նախագահի բազկաթոռի վրա. սրա ետևն, պատի մէջ, պահված մի փոքրիկ տուփ՝ փղոսկրեայ 5 կոճակներ է պարունակում, որոնք էլեքտրական հոսանքով կապվել են պալատի 4 գլխաւոր դռների, ինչպէս և պահապան զինուորների ջոկատի ննջարանի հետ։ Եթէ մի արկած, մի ոճրագործութիւն պատահի, ինչպէս 4 տարի առաջ փորձ եղաւ պ. Բրիանի վրա, բաւ է որ այն կոճակների վրա սեղմվի, իսկոյն 4 դռները կը փակվեն և ոչ ոք չէ կարող դուրս կամ ներս գալ. միևնոյն ժամանակ պահապան զինուորներն էլ կը զինաւորվեն։

Դուրս գանք աջից. ահա «ըմպելարանը» (buvette), ուր դասաւորել են զանազան շիշեր՝ գինօղի, ռօմ, կօնեակ, գարեջուր, քօլայի գինի, բօրդօ, մալագա, ջուր... Մի ծառայ միշտ սպասում է այդտեղ, և սա է որ բերում է իւրաքանչիւր ճառախօսի կամեցած խմիչքը։ Այստեղ կայ նաև մի փոքր խոհանոց, ուր միշտ պատրաստ են թէյ, սուրճ, շօկօլադ, ինչպէս և խոզի միս և պանիր։

Շարունակենք մեր ճանապարհը. ահաւասիկ պարլամենտի գրադարանը որ 400,000-ից աւել հատոր է պարունակում. հատորների թիւը ամեն տարի աւելանում է, որովհետև 20,000 ֆր. կրէդիտ ունի այդ գրադարանը զանազան գրքեր գնելու։ Բացի գրքերից և զանազան անգին ձեռագրերից, գրադարանը պարունակում է մի կատարեալ հաւաքածու Պարիզի և գաւառների բոլոր թերթերի, որ կարելի է թղթատել ամեն րոպէ։

Երկու վարժ սափրիչներ, գրադարանի կողքին, մի սիրուն սրահում կազմ և պատրաստ են եկող պատգամաւորին ածիլելու կամ նրա մազե՜րը խուզելու։ Մի քանի տասնեակ քայլ հեռու է գտնվում «բանտը», այո՛, բանտը... որի մէջ 48 ժամ արգելում էին ժամանակին այն պատգամաւորներին, որոնք նիստերի ժամանակ, ըմբոստանում էին նախագահի դէմ, նրա խօսքերին չէին անսում։ Այսօր այդ բանտը վերածվել է սալօնի և բժշկական կաբինէտի։

Բարձրանալով ձեղունների մէջ՝ տեսնում ենք ոչ միայն լուսաւորութեան սիստեմը, այլ և մի ահագին ջրամբար, որ պարունակում է 60,000 լիտր ջուր, որը հրդեհի ժամանակ մի կատարեալ ջրհեղեղ կարող է թափել պալատի գլխին։ Նախագահի սալօնի վրա գտնվող ձեղունում մի առանձին տեղ կայ, ուր, երեկոյթների ժամանակ, մի մարդ է թաքնվում, սալօնում անցած դարձածները դիտելու, ոճրագործների և անարխիստների վրա հսկելու։

Այս երկար այցելութիւնը վերջացնելուց առաջ յիշենք մի քանի թւեր. թւերը միշտ հետաքրքրական են։

Բուրբոնեան պալատի 1913-ի բիւջէն էր 12.041,988 ֆր., որից 8.955,000-ը պատգամաւորների, 72,000-ը նախագահի և 1.196,000-ը պաշտօնեաների ռոճիկին էին յատկացվել. ծառայողների համազգեստի 41,000 ֆր. կահ-կարասիքների համար՝ 75,000 ֆր., նորոգել-շինել-մաքրելու համար՝ 80,000 ֆր., մեդալների և նշանների համար՝ 44,800 ֆր., «Journal officie»-ի համար՝ 26,000 ֆր., բժշկական պէտքերի համար՝ 16,200 ֆր., կառքերի համար՝ 3000 ֆր.; վերջապէս 560,000 ֆր. էլ զանազան տպագրութիւնների համար...

Sur ce, au revoir...!

Պարիզ, 8 յուն. Ռ. Շահ-Մելիքեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Բուխարէստից հեռագրում են, որ շատ քաղաքներում տարածված են թռուցիկներ, որոնց մէջ ասված է. «Հրէաները յանդգնաբար պահանջում են քաղաքական իրաւունքներ, յափշտակելով երկրի ամբողջ հարստութիւնը։ Ռումիններ, վերցրէք մահակներ և տուէք նրանց իրաւունքներ, դուք չէք պատժվի»։

◆ Լօնդօնում բացվեց պօստ-հեռագրական միջազգային կօնգրէսը։ Մասնակցում են 40 ներկայացուցիչ աշխարհի զանազան երկրներից։

◆ Բեռլինից հեռագրում են, որ օդագնաց Բասսէրը սահմանեց երկարատև թռիչքի նոր համաշխարհային մրցակէտ, մնալով օդում 18 ժամ 10 րոպէ։

◆ Պարսկաստանում ներկայումս նկատվում է ներքին խմորում աւելի ազգային տարրերի մէջ, որոնք գրգռված են անգլօ-ռուսական նոր քայլերից, որ, նրանց կարծիքով, ուղղված են վերջնականապէս բաժան-բաժան անելու Պարսկաստանը։ Ցաւալի դրութիւնը աւելի է վատթարանում այն լուրերից, թէ Ատրպատականը լսել անգամ չէ ուզում սահմանադրական րէժիմի մասին, թէ շահի թագադրութիւնը յետաձգվում է և, վերջապէս, իբր թէ Մահմէդ-Ալին մտորում է նորից ձեռք ձգել իր կորցրած գահը։

◆ Ռուսաց լրագիրների մեծ մասը, մատնանշելով սպանված աւստրիական գահաժառանգ Ֆրանց-Ֆէրդինանդի թշնամական վերաբերմունքը, որ ունէր հանգուցեալը դէպի Ռուսաստանը, ցաւ է յայտնում միայն այն մտքով, որ ծերունի Ֆրանց-Յովսէփ կայսրը, որ առանց այն էլ դժբաղդ է իբրև միապէտ, ընկնում է ցնցող ազդեցութեան տակ։

◆ Պարիզում պօստային ծառայողների գործադուլը վերջացաւ։ Մամուլի մի մասը նկատում է, որ պօստային վարչութիւնը տարին եկամուտ է ստանում 100 միլիօն ֆրանկ. միթէ կարելի չէր քիչ չափով բաւարարել ծառայողների պահանջները։

◆ Ալբանիայից ստացվող վերջին հեռագիրները շատ մռայլ գոյներով են նկարագրում այնտեղ տիրող կացութիւնը։ Եւրոպական զօրքի միջամտութիւնը անհրաժեշտ է օր առաջ։ Պրինց Վիդի փախստեան մասին ճիշդ տեղեկութիւն չէ տրվում։

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—12 ժ. 8 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 2 ժ. 11 ր., Գանձակ 4 ժ. 23 ր., Եւլախ 5 ժ. 43 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 56 ր. եր., Բագու 11 ժ. 50 ր. գիշ.: **Պօստաւոր գնացքը** № 4—10 ժ. 20 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 1 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 7 ր. առ., Եւլախ 6 ժ. 56 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 40 ր. առ., Բագու 3 ժ. 22 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 25 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 49 ր. եր., Գանձակ 11 ժ. 22 ր. գիշ., Եւլախ 1 ժ. առ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 58 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 12—4 ժ. 5 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 6 ժ. 48 ր. եր., Գանձակ 9 ժ. 32 ր., Եւլախ 11 ժ. 17 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 33 ր., Բագու 7 ժ. 25 ր. առ.: **Խառն գնացքը** № 22—4 ժ. 58 ր. առ., հասնում է Աղստաֆա 9 ժ. 46 ր. առ., Գանձակ 2 ժ. 15 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 58 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 11 ժ. 34 ր. գիշ., Բագու 5 ժ. 4 ր. առ..

ԲԱԹՈՒՄ.—**Պօստաւոր գնացքը** № 3—9 ժ. 54 ր. առ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 59 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 7—2 ժամ 18 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլովօ 5 ժ. 35 ր. եր., Բաթում 12 ժ. 48 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 9—8 ժ. 53 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 4 ր. գիշ., Բաթում 10 ժ. 1 ր. առ.: **Խառն գնացքը** № 21 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 59 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 9 ժ. 3 ր. առաւ., Բաթում 10 ժ. 10 ր. գիշ.: **Արագ գնացքը** № 5—8 ժ. 16 ր. եր., հասնում է Միխայլովօ 11 ժ. 15 ր. գիշ., Բաթում 6 ժ. 33 ր. առ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստաւոր գնացքը** № 4/3—12 ժ. 56 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 53 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երեւան մտնելու), Նախիջևան 10 ժ. 11 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 38 ր. ցեր.: **Խառն գնացքը** № 24/25 (IV կարգի վագօններով)—10 ժ. 58 ր. առ., հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 20 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 4 ժ. 18 ր. առ., Ալագեօզ 10 ժ. 8 ր. ցեր., Ուլուխանլու 1 ժ. 18 ր. ցեր., Նախիջևան 8 ժ. 18 ր. եր., Ջուլֆա 10 ժ. 13 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 17/18—6 ժ. 58 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 1 ժ. 57 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 5 ժ. 19 ր., Էջմիածին 10 ժ. 21 ր., Ուլուխանլու 10 ժ. 49 ր., Երեւան 11 ժ. 42 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 14/13—11 ժ. 13 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 6 ժ. 14 ր. առ., Ալէքսանդրօպօլ 9 ժ. 41 ր. ցեր., Կարս 1 ժ. 8 ր. ցեր.:

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—7 ժ. 28 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 5 ր. առ., Բօրժօմ 12 ժ. 48 ր. ցեր.: **Մարդատար** № 19/20—3 ժ. 20 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 51 ր. ցեր., Բօրժօմ 8 ժ. 26 ր. երեկ.:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—7 ժ. 41 ր. եր. **Պօստաւոր գնացքը** № 3—8 ժ. 58 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 7—1 ժ. 42 ր. ցեր.: **Խառն գնացքը** № 21—2 ժ. 17 ր. գիշերվայ: **Մարդատար գնացքը** № 11—10 ժ. 5 ր. առ.:

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստաւոր գնացքը** № 4—9 ժ. 30 ր. երեկ.: **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 55 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 10—9 ժ. 51 ր. առ.: **Խառն գնացքը** № 22—3 ժ. 55 ր. գիշ.: **Արագ գնացքը** № 6—11 ժ. 8 ր. առ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստաւոր գնացքը** № 4Д./3—7 ժ. 21 ր. եր.: **Խառն գնացքը** № 26/27 (IV կարգի վագօններով)—4 ժ. 41 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 18/17—8 ժ. 28 ր. առ.: **Մարդատար** (Կարսից) **գնացքը** № 16/15—6 ժ. 58 ր. առ.:

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—10 ժ. 28 ր. եր.: **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 15 ր. առ.:

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում Բէբուտովսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային եւ աղիքային հիւանդ.: Էլեքտրօտէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տէլէֆօն № 388.
(ա. օ.) 112. 100—92

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կօկանդի հայոց միդասեան դպրոցի համար հարկաւոր է՝

1) ՄԻ ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ, որ աւանդելու է շաբաթական 18 դաս, և լինելու է խմբապետ աշակերտական խմբի։ Վարժապետութիւն աւագութեան և դասատուութեան համար տարեկան 800 րուբլի, խմբապետութեան համար 100 րուբ. և ճանապարհածախք 50 րուբլի։ Պահանջվում է մի քանի տարվայ փորձառութիւն։

2) ՄԻ ՅՈՎՆԱՆԵԱՆԱՒԱՐՏ ՎԱՐԺՈՒՀԻ, փորձված, շաբաթական 24 դասի համար ռոճիկ տարեկան 600 րուբլի և ճանապարհածախք 50 րուբլի։ Դիմել Հոգաբարձութեան հետևեալ հասցէով. Кокандъ. Арташесу Ваціянпу, և կամ դիմել Ուսուցչական Բիւրօյին։
(օ. մ.) 612. 3—1.

Մեծ-Ղարաքիլիսայի հայոց ծխական երկսեռ դպրոցի համար հարկաւոր է
ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ,
որը պէտք է ունենայ գոնէ մի քանի տարվայ փորձառութիւն, շաբաթական 16 դասով. (հայոց լեզու, ընդհանուր պատմութիւն)։ Ռոճիկ տարեկան 800 ր.։ Ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Сел. Больш. Караклисъ. Попечительству армянскаго приходскаго училища.
(օ. մ.) 611. 5—1

ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ.
Լոյս տեսան մանկական գրադարանի
1) Ս. Տէր-Աւետիքեանի պատկերազարդ պատմուածք „Բուռօնը“ գինն է 25 կ.
2) Գրիմմ եղբ. պատկերազարդ „Հէքիաթներ“ պրակ I գինն է 25 կ., պր. II գինն է 25 կ.։ Թարգմ. Յովհ. Թումանեան։
Վաճառվում է Թիֆլիսի բոլոր հայ գրախանութներում։ Պահեստը Ընկ. մօտ՝ Тифлисъ, Кавказское Армянское Издательское Общество. Абасъ-Абадская пл. № 7.
(օ. մ.) 569. 5—5

95 ԿՈՊԵԿՈՎ
ՄԵԾ ՀԻԱՑՄՈՒՆՔ Է ՊԱՏՃԱՌՈՒՄ
ՏՆԱՅԻՆ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՆՈՐ ԳՐՔՈՅԿԸ
[illegible] Т-во «ЗАРЯ», Варшава, отд. 51.
(26, յուլ. 4) (В. 36514) 3—1

Էմիրզեան Գէորգեան Ճեմարանի Վարչութիւնը
յայտնում է, որ առաջիկայ 1914—1915 ուսումնական տարում ճեմարանի Բ., Գ., և Զ. դասարաններում ընդունելութիւն լինելու չէ։ Ընդունելութիւն կը լինի միայն Ա. դասարանում [illegible]
Տեսուչ ճեմարանի Բագրատ Խալաթեան
594. 3—3

ՈՍԿԵ ԺԱՄԱՑՈՅՑ



[illegible]
Berlin 51. I. Strumfeld
Берлинъ 51. Klosterstr. № 42
(18,26. յուլ. 4) (В. 36460) 4—3

ՄԵՐՎԻ ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ
համար հարկաւոր են հետևեալ ուսուցիչները.
1) ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ—շաբաթական 18 դասով [illegible] Ռոճիկ տարեկան միմիայն 800 րուբլի.
2) Մի հմուտ և լաւ ձայնով ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ—շաբաթական 25 դասով [illegible] Ռոճիկ տարեկան 850 րուբլի.
3) ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ շաբաթական 27 դասով [illegible] Ռոճիկ տարեկան 700 րուբլի.
4) ՄԻ ԳԻՄՆԱԶԻԱՒԱՐՏ ՎԱՐԺՈՒՀԻ [illegible] շաբաթական 29 դասով [illegible] Ռոճիկ տարեկան 700 րուբլի.
Ցանկացողները [illegible] հետևեալ հասցէով Мервъ, Давиду Андреевичу Кеворкову.
(Կ. Հ.) 524. 10—7

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный
]